



ցին, կաթողիկէ Հաւատացեալները ցրուեցին, զրկուելով իրենց իսկ ստացուածքներէր: Իսկ յիշեալ վաճառականից էլ որպէս տուգանք առան հազար սկուզ: Դիմում ենք առաքելական Ս. Աթոռին՝ խնդրելով, որ նկատի առնէք մեր խօսքերը ու տեսնէք այն խեղճութիւնը, որի մէջ ենք գտնուում, ձեռք առնելով այն միջոցները, որ յարմար էք նկատում ձեր բնական բարութեամբ: [Առաքել եպիսկոպոսը նամանապէս խնդրում է նաեւ], որ հաճէիք տալ նորին սրբութեան (իմա՛ պապի) կողմից մի նամակ՝ ուղղուած պարսից շահին, որպէսզի արգելք չհանդիսանան յիշեալ Երեւան քաղաքում վերաշինելու եկեղեցին ու վերադարձնեն նաեւ նոյն Երեւան քաղաքում շինուած Ս. Գրիգոր եկեղեցու կալուածքները, որոնք շուրջ 500 տարուց աւելի եղել են ուրիշ վանքի սեփականութիւնը: Երկար ճամփորդութիւն է կատարել, ահագին ծախսերով, [Հոռոմ] գալու եւ շնորհները խնդրելու»<sup>8</sup>:

Հաւատաստիւ ժողովի դիւանում, ուր պահուում է Առաքելի եպիսկոպոսական ձեռնադրութեան վկայականի լատիներէն թարգմանութիւնն ու վերոյիշեալ խնդրագիրը, երկուսի արանքում կարուած է նաեւ մէկ այլ փաստաթուղթ, որն Առաքել եպիսկոպոսը բերել էր Հայաստանից եւ Հռոմում թարգմանել տուել իտալերէն. դիւանում պահուածը հէնց թարգմանութիւնն է: Խօսքը 1051 թ. մի յիշատակարանի մասին է, ըստ որի՝ Գրիգոր Մագիստրոսը կառուցել է Կեչառիսի վանքը եւ եկեղեցին՝ Գրիգոր Լուսաւորչի անուամբ. նոյն եկեղեցուն է նուիրուած մի գիւղ եւ այգի: Նամանապէս վանական եւ Համա-

8 St' u SOCG, vol. 418, ff. 92: Նամակից մի հատուած, առանց դիւանական փաստաթղթի էջահամարի մշման, անգլերէն թարգմանութեամբ տե՛ս [H. Chick], *A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIII Centuries*, Vol. I, London, 1939, p. 412:

զասպ եպիսկոպոսները նոր եկեղեցուն նուիրել էին 25 գիւղ եւ մէկ քաղաք<sup>9</sup>:

9 St' u SOCG, vol. 418, ff. 96: Երբ Նապոլեոնի կողմից Փարիզ փոխադրուեց Հայաստափիտի դիւանը, այս փաստաթուղթը յայտնաբերուեց եւ հրատարակուեց հայագետ Սէն Մարտէնի կողմից: Ահա ամբողջական իտալերէն տեքստը. «L'anno e del duca di Vaspuracano, nella provincia di Zachununc, io Gregorio Magistro, figlio di Vasacha, pigliando il Privilegio e licenza dal sopradetto re, ho fondato e costruito una chiesa in luogo detto Checcianer, nella provincia sopradetta di Zachunuc e questo oratorio; ho dedicato questo tempio e chiesa al nostro Illuminatore S. Gregorio; e l'ho ornato di paramenti d'argento, oro, libri, e d'altre cose necessarie, che aspettavano al detto tempio: e di piu ho donato alla detta chiesa due ville e una vigna. Noi per Dio grazia vescovi Picinense, Vanucan e Hamavar, habbiamo decretato e constuito per la sopradetta chiesa possessioni per antrata 25 ville e una città: le quali sono queste: Puschan, Schoeaten, etc. Abbiamo confermato il nostro decreto di nostra propria mano e nostri sigilli. Se alcun uomo pel l'avenire, tanto ecclesiastico quanto secolare, averà l'ardire di distruere il nostro decreto, riceva la maleditione dal nostro S. Illuminatore Gregorio e da 318 vescovi del Concilio Nicense, e sia fatto partecipe e compagno con Giuda traditore e delli crucifissori del Nostro Signor Giesu Christo. Cji poi servirà il detto nostro decreto, sia benedetto dal nostro Signore Iddio»: Հ. Աետնդ Ալիշանն այն վերածել է գրաբար թայերէնի՝ արտասպելով նաեւ Սէն Մարտէնից վերցուած վերոբերեալ իտալերէնը. «Որպէս ՚ի դիմաց բանիցն երեւի, արձանագիրդ ոչ ուղղակի ՚ի Մագիստրոսէ գրեալ է, այլ ՚ի համար նորին. սակայն սկս ունելի է գտանել եւ զինքնագիր կամ զհաշիւներն նորին յիշատակագրութիւնն. եւ ահա տարօրինակ իմն բաղդի՛ յանակնկալ տեղուց, ՚ի դիւանն Հայաստափիտ ժողովոյն Հոռովսայ. գտեալ է իտալերէն թարգմանութիւնն արձանին, մնալ իմն նախագրելոյն, ոչ գիտեմ ե՞րբ եւ ո՞ր թարգմանեալ գոր ՚ի փոխադրութեան դիւանացն առ Ա Նապոլեոնի ՚ի Բարիզ. գտեալ հայագիրին ԱԵՇ Մարտէնի՛ յետեալ է յիւր Յիշատակարանս Հայոց (տե՛ս Antoine Jean de Saint-Martin, *Mémoires historiques et géographiques sur l'Arménie*, Tome 2, Imprimerie royale, Paris, 1819, p. 287-288). Գալլո յոսարացեալ թարգմանութեանէ անտի (իտալականէ) յետոյն ստանալով ՚ի բնիկ մեր բարբառ, ցատկով զի կամ թարգմանն իտալացի կամ ՍԵՆ Մարտէն ՚ի բաց թողեալ է գանուանս 25 գիւղից զոր յիշէ արձանն՝ տուեալ ՚ի կալուածս վանացն. «Ն թուականիս

Այս երեք փաստաթղթերը զեկուցուել են Հաւատաստիւ ժողովի 1669 թ. յունուարի 15-ի նիստին, որի արձանագրութիւնը հաղորդում է. «Գերապայծառ Առաքել Հայ արքեպիսկոպոսը Հռոմ է եկել ձեր բարձրութեանը ներկայացնելու համար, որ Երեւանում եկեղեցի է կառուցել Հայ կաթողիկէ Ազարիայի օգնութեամբ (փակագծերում քարտուղարութիւնը աւելացրել է՝ մի անձ, որ լաւ ծանօթ է Ս. Ժողովին), ուր վերադարաւոր (capucin) քարոզիչները պիտի պաշտօնավարէին, քանդուել է Պարսկաստանի թագաւորի պաշտօնեայի կողմից, Հայ հերձուածողների դրդումով, ու ներկայումս արքեպիսկոպոսը վտարուած եւ

(1051) ՚ի ժամանակս Կոստանդեայ Մոնոմախի թագաւորի Հայոց (Յուսայ) Դուքոս վասպորականի (եւ տէր) գաւառիս Մաղկանոց, եւ Գրիգոր Մագիստրոս որդի վասակայ, հրովարտական եւ հրամանաւ վերոյ ասացեալ թագաւորիս՝ հիմնադրեալ շիւնեցի զեկեղեցիս ՚ի տեղուցս որ կոչի Կեչառուս, ՚ի նախասացեալ գաւառի Մաղկանոց, հանդերձ մասամբս. եւ նուիրեցի գտանարս եւ զեկեղեցիս՝ յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ. եւ զարդարեցի զաւ սպասուք արծաթեղիճք եւ ոսկեղիճք, գրովք եւ այլովք պիտոյիք, որպէս վայելէր տաճարիս: Դարձեալ ետու եկեղեցոյս զեղոս երկուս եւ այգի մի: -(եւ) մեր շնորհիւն Աստուծոյ եպիսկոպոսուքս Բջնոյ վանական եւ Համավար, սահմանեցաք եւ հաստատեցաք ՚ի թեմ եւ կայուած վերոյգրեալ եկեղեցոյս՝ զեղոս քսան եւ հինգ եւ քաղաք մի, որք են Բուժան, Ծոկաթն (?), եւ այլն: Եւ հաստատեցաք զվճիտս մերով ձեռագրովս եւ կնքովս: Արդ եթէ որ յետ մեր կամ յեկեղեցականաց կամ յաշխարհականաց իշխեսցէ հակառակ կալ վճոյս մերոյ, նզովս սոցէ ՚ի Սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէ եւ ՅԺԸ հայրապետացն Նիկիոյ ժողովոյն, եւ մասն եւ բաժին նորա ընդ Յուդայի մատնչի եւ ընդ խաչահանուացն Քրիստոսի եղիցի. իսկ որ հաստատուն պահէ՝ օրհնեալ եղիցի ՚ի Տեառնէ Աստուծոյ (Հ. Ղ. Ալիշան, Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վեներտիկ-Ս. Ղազար, 1890, էջ 260) (Հայաստափիտի դիւանի այս փաստաթղթում յիշատակուող անձանց, նրանց ծագումնաբանութեան մասին աւելի մանրամասն տե՛ս Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան, *Խաղբակեանք եւ Պոշեանք Հայոց պատմութեան մէջ*, Բ հրատարակութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 158-163 եւ հետագայ):

զրկուած է իր Հասոյթներից: Նա աղաչում է նորին սրբութեանը մի յանձնարարական գրութիւն տալ Պարսկաստանի շահին, որպէսզի իրեն թոյլ տրուի Երեւանում նոր եկեղեցի կառուցելու. նամանապէս հրահանգ տայ, որ իրեն վերադարձուի նոյն քաղաքում Ս. Գրիգոր եկեղեցու Հասոյթները, որ 500 տարուց ի վեր մի այլ վանքի Հայ կրօնաւորներ են վայելում»: Ժողովականները իմանալով, որ Առաքել եպիսկոպոսը պիտի հաւատոյ դաւանութիւն կատարի, որոշում են դիմել պապին՝ պարսից շահին յանձնարարական նամակ շնորհելու նպատակով, իսկ եկեղեցու կալուածքների վերաբերեալ գրել Նախիջևանի եպիսկոպոսին եւ այլոց՝ տեղեկութիւններ հաւաքելու համար<sup>10</sup>:

Պապի ունկնդրութեանն արժանացած անձանց վերաբերող դիւանական հատորում՝ 1669 թ. յունուար ամսի արձանագրութեան մի հաղորդագրութիւնում, ասուում է հետեւեալը. «Մի քանի օր է՝ Հռոմ է հասել Երեւանի Առաքել եպիսկոպոսը, սրբութեանը մատուցելու իր հնազանդութիւնը, պիտի կատարի հաւատի դաւանութիւնը. հրաման է խնդրում կատարելու, արձակուելու համար իր անկարգութիւններէրց, որպէսզի հաստատուի իր արքեպիսկոպոսական պատուի մէջ»: Պատասխանը լինում է՝ «Թող շնորհուի»<sup>11</sup>: Մէկ այլ արձանագրութիւն հաղորդում է. «Նոյն եպիսկոպոսը ներկայացնում է, թէ Երեւանում անհաւատների կողմից կործանուել է մի եկեղեցի, եւ ինքը զրկուել է կալուածքներից: Եպիսկոպոսը յուսով է Պարսկաստանի շահից եկեղեցին վերաշինելու համար հրաման ստանալու, եթէ ձեր սրբութիւնը նամակով դիմի շահին»: Պատասխանը հետեւեալն է.

10 St' u AP, Acta Sacrae Congregationis de Propaganda Fide (այսուհետեւ՝ Acta), vol. 38, f. 25, n. 28:  
11 St' u AP, Udienze di nostro Signore (այսուհետեւ՝ Udienze), vol. 1, f. 55r:

«Թող գրուի նամակը»<sup>12</sup>: 1669 թ. յունուարի 31-ին Հալատաքենոսթեան ժողովից կարդինալ Կազանետեն (Casanete)-ն գրում է Հալատասփիլոս ժողովի քարտուղարին, թէ «երէկ ունկնդրութիւն ունենցայ պապի մօտ եւ կարդինալ Օրսինիին լիազօրութիւն տրուեց ընդունելու հայ եպիսկոպոսի հալատոյ դաւանութիւնը, որի մասին երէկ խօսեցինք»<sup>13</sup>:

Երեւանի Ս. Աստուածածին մատուռի կործանումը եւ Ազարիա Աւագը

Առաքել եպիսկոպոսը Ս. Աթոռին ներկայացրած իր խնդրագրում յիշում է, որ Ազարիա Աւագի հետ միասին կառուցել էին մի մատուռ, որտեղ հալատացեալները կատարում էին իրենց պաշտամունքը, եւ որ մատուռը քանդուեց «հերձուածող» հայ Գէորգի հակառակութեամբ: Փաստաթղթերը թոյլ են տալիս աւելի առարկայական հետեւելու դէպքերի ընթացքին:

Ազարիա Աւագը Հռոմի հետ յարաբերութիւնները սկսել էր մշակել գերապայծառ Պիքէի (Picquet)<sup>14</sup> միջոցով, ով իրեն ու իր զաւակին ներկայացրել էր Ս. Աթոռին, որպէսզի երկու տարի Հռոմում ուսանի՝ աշակերտելով Ուրբանեան վարժարանում: Հալատասփիլոս ժողովի 1662 թ. մայիսի 22-ի նիստով ընդունւում է Պիքէի առաջարկը, ով Ազարիային ներկայացրել էր որպէս կարեւոր եւ ազդու անձնաւորութիւն, որ կա-

րող էր մեծ բարիքներ անել կաթողիկէ վարդապետութեանն ի նպաստ<sup>15</sup>:

1662 թ. յունիսին Ազարիան արդէն իսկ Հռոմում էր, եւ Պիքէն Լիվոռնոյից ողջոյններ էր ուղարկում նրան Պաստրիտիոյի (Pastritio) միջոցով<sup>16</sup>: Միաժամանակ Պիքէն հաղորդում էր, թէ Մարգար անունով հայ վաճառականը, իր մետաքսը ծախելու պէս, Լիվոռնոյից Հռոմ պիտի երթար անձամբ ողջունելու Ազարիային: Մարգարն Ազարիայի կողմից ուղարկուել էր Հնդկաստան եւ ետդարձին լուրեր էր բերել Ազարիայի ընտանիքից:

1663 թ. յունուարի 23-ի Հալատասփիլոս ժողովի նիստին զեկուցւում է Ջիւնաստանի առաքելական նուիրակ Հելիոպոլսի եպիսկոպոսի (իմա՝ Ֆրանսուա Պիքէ) 1662 թ. յուլիսի 3-ի թուակիր նամակը<sup>17</sup>: Նոյն ժողովի արձանագրութեան մէջ համառօտուած է յիշեալ նամակը, ուր նկարագրւում է Հելիոպոլսի եպիսկոպոսի էջմիածնով անցնելը եւ նրա տպաւորութիւնները: Ի միջի այլոց առաջարկւում է, որ Հռոմի եկեղեցին ծածուկ կերպով թափանցի թէ՛ էջմիածին եւ թէ՛ Երեւան: Նպատակին հասնելու միջոցներից մէկն էլ հետեւեալն էր՝ «Երեւանի մէջ առաքելութիւն հաստատել վեղարաւորների ձեռքով, որոնց կարող էր օգնել Ազարիան, որ ներկայումս գտնւում է Ուրբանեան վարժարանում: Մանաւանդ որ գիտենք, թէ Երեւանի եպիսկոպոսը կաթողիկէ հալատքի հանդէպ լաւ է տրամադրուած»: Ժողովի արձանագրութեան մէջ Երեւանի եպիսկոպոսի անունը չի նշուած, սակայն շատ տարակուսելի կը լինէր, եթէ դա լինէր Առաքել եպիսկոպոսը, ով իր ձեռնադրութիւնը ստացել էր Աղթամարի Մարտիրոս կաթողիկոսից եւ դժուար թէ հնարաւորու-

12 Տե՛ս AP, Udienze, vol. 1, f. 55v:

13 Տե՛ս AP, Scritture riferite nei Congressi (այսուհետեւ՝ SC) Armeni, vol. 1, f. 199:

14 Նշանատր վեղարատր եւ Հալէպում Լուդովիկոս ԺԴ-ի դեսպան Ֆրանսուա Պիքէի մասին մանրամասն տե՛ս Georges Goyau, *Un précurseur: François Picquet. Consul de Louis XIV en Alep et évêque de Babylone*, Paris, 1942; Hussein I. El-Mudarris & Olivier Salmon, *Le Consulat de France à Alep au XVIIIe siècle; Journal de Louis Gédoyne, Vie de François Picquet, Mémoires de Laurent d'Arvieux*, Alep-Syrie, 2009:

15 Տե՛ս Acta, vol. 31, f. 60, n. 6:

16 Տե՛ս AP, Misc. varie, vol. XVII, f. 6-7:

17 Տե՛ս SOCG, vol. 222, ff. 192-194:

թիւն ունենար Արարատեան երկրում՝ էջմիածնի քթի տակ, թեմ կառավարելու:

Հալատասփիլոս ժողովի նոյն նիստին որոշւում է գրել վեղարաւորներից Հ. Գաբրիէլ Շինոնին (P. Gabriele de Chinon), որ իր գործունէութեան սահմանները տարածի մինչեւ Երեւան ու խոհեմօրէն ջանայ քննել [Յակոբ Ջուղայեցի] կաթողիկոսի տրամադրութիւնները: Փիրոմալին եւ Գալանոսը հայերէնի թարգմանեն գրքեր եւ նոյն Շինոնի ձեռքով տարածեն Երեւանի շրջակայքում, ու վերջապէս՝ Երեւանի մէջ առաքելութիւն հաստատելու համար հարցուի Ազարիայի կարծիքը<sup>18</sup>:

1664 թ. առաջին ամիսներին Ազարիան պատրաստւում էր մեկնել Հայրենիք եւ այդ պատճառով խնդրագիր էր ներկայացրել Ս. Ժողովին՝ ստանալու եւ իր հետ տանելու մի շարք գրքեր<sup>19</sup>:

Արդէն նոյն տարուայ հոկտեմբերին Ազարիան Լիոնում էր, ուր գտնւում էր նրա մտերիմն ու բարերարը՝ գերապայծառ Ֆր. Պիքէն<sup>20</sup>:

Հետագայ մի քանի տարուայ վերաբերեալ յիշատակումներ չկան: Դիւանում կայ 1667 թ. սեպտեմբերի 9 թուակիր մի նամակ, որի հեղինակն է վեղարաւոր Յովսէփ-Մարիա դի Բլուան (P. Giuseppe-Maria di Blois): Այն գրուել է Երեւանում եւ հասցեագրուած է Հալէպի վեղարաւորների մեծաւորին՝ Հ. Սիլվեստրո դա Ս. Անեանին (P. Silvestro da S. Agnano): Ֆրանսերէն գաւառաբարբառով գրուած նամակի<sup>21</sup> իտալերէն համառօտագրութիւնը<sup>22</sup> կառարել է Կղեմէս Գալանոսը: Մեր հետագայ տեղեկութիւնները քաղում ենք այս փաստաթղթից ու համառօտագրութիւնից:

18 Տե՛ս Acta, vol. 32, f. 6, n. 12:

19 Տե՛ս SOCG, vol. 223, f. 193:

20 Տե՛ս Misc. varie, vol. XVII, f. 33-35:

21 Տե՛ս SOCG, vol. 221, f. 69-71:

22 Տե՛ս SOCG, vol. 221, f. 73-74:

Երբ Հ. Գաբրիէլ Շինոնն ու Հ. Յովսէփ դի Բլուան (P. Giuseppe di Blois) հասնում են Երեւան, օգնութիւն են ստանում շատ բարի Ազարիա հայազգի կաթողիկէից: Պատարագելու համար փափագելով մատուռ շինել՝ մաքրում են մի ախոռ եւ վերածում մատուռի, որտեղ յուլիսի 31-ին մատուցում են առաջին պատարագը: Հետաքրքրութիւնից կամ բարեպաշտութիւնից մղուած՝ պատարագին ներկայ է լինում մօտ 20 հոգի, որոնց մէջ էր նաեւ Ազարիա հայր եւ մի ուրիշ կաթողիկէ վրացի (°): 15 օր ազատօրէն պատարագում են: Առաջին օրը Ազարիայի հետ այցելութեան է գալիս Յովհան վարդապետը՝ Երեւանի վանքերից մէկի առաջնորդը, որ վէճ է ունենում կաթողիկէ հալատքի մասին: Ազարիայի բռնած դիրքից վարդապետն իրեն բաւական վիրաւորուած է զգում: Լուրը հաղորդում են այդ պահին քաղաքից դուրս գտնուող եպիսկոպոսին. սա վարդապետների հետ միասին դիմում է դատաւորին: Վերջինս զարմանում է, թէ ինչու են բողոքում մի քրիստոնեայ վարդապետի դէմ, ով մատուռ է շինել եւ ոչ-թէ մզկիթ: Դիրքաւորում են նաեւ Ազարիայի դէմ՝ սպառնալով բանադրել, եթէ մատուռը չանհետացնի: Ազարիայի մայրն էլ, կաթողիկէ չլինելով, նոյնն էր պնդում որդուն: Օգոստոսի 14-ին՝ պատարագից յետոյ, հերետիկոսներն ու կանայք, որոնց մէջ նաեւ Ազարիայի մայրը, յարձակւում են մատուռի վրայ...: Հայ վարդապետների միջամտութեամբ թուրքերը<sup>23</sup> կնքում են մատուռը: Երբ գալիս է դատաւորը Հ. Յովսէփը պատասխանում է, թէ նախկին ախոռն էր, որ մատուռի են վերածել: Դատաւորը հարցն ուղղորդում է իշխանին (իմա՝ Երեւանի խաղորդում է իշխանին (իմա՝ Երեւանի խաղորդում է իշխանին)՝ ասելով, թէ հնուց ի վեր Երեւանում հայեր եւ թուրքեր են եղել, եթէ իշխանը թոյլ տայ նաեւ ֆրանկներին, ապա հարցը կը լուծուի: Վեղարաւորները, Ազարիան եւ

23 Իմա՝ մամսեղակաւանները:



պայ չարակամութեամբ եւ ուր որ անոնք կրնան, նոյնիսկ գործադրելով: Բայց նախ եւ առաջ այս Արքեպիսկոպոսը կը ցանկայ որ իրեն շնորհուի Ձեր բարձրութենէն իրաւունքը Երեւան քաղաքին մէջ եկեղեցի մը շինելու, որ մեծ մխիթարանք եւ հոգեկան բարօրութիւն պիտի ըլլայ ապահովաբար այդ կողմերու բոլոր կաթողիկոսներուն: Իսկ, եթէ հաճելի պիտի ըլլայ արքայական կամքին ատիկա շնորհել, ատիկա աւելի եւ աւելի իրեն պիտի կապէ բարի կամեցողութեան նոր եւ ուժեղ կապերով՝ արդէն իր բարեգործութիւններով շահած մեր սէրը: Մինչ այդ՝ մենք յարատեւ աղօթքներով կը շարունակենք ամբողջ հոգևով աղօթել Բարձրալին, որ իր անհուն բարութեամբ հաճի շնորհել Ձերդ Վսեմութեան կատարեալ երջանկութիւն՝ բոլոր բարեքներու առատ հեղուսով»<sup>31</sup>:

31 Կղեմէս Ը. պապի լատիներէն նամակը շահ Սուլէյմանիմ թուագրուած է 1669 թ. փետրուարի 13-ով (Առաքելի ձեռքով շահ Սուլէյմանիմ ուղարկուած նամակի պատճէնը տես՝ ASV, Epist. ad Princ., vol. 68, p. 257, լատիներէն բնագրի հրատարակութիւնը՝ տե՛ս՝ [H. Chick], *A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIII Centuries*, vol. II, London, 1939, Appendix A, p. 1304): Հայերէն թարգմանութիւնը կատարուած է ոչ թէ լատին բնագրից, այլ բաւականիմ հարազատ թարգմանուած է անգլերէնից (տե՛ս [H. Chick], *A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIII Centuries*, vol. I, London, 1939, p. 413) Հմմտ. Յ. Քիրտեան, *Յակոբ կաթողիկոս Ջուղայեցի*, էջ 47: Ստորեւ բերում ենք լատիներէն բնագրի նամոյնը:

13.2.1669 Clementis PP. IX. Brev.

Illustri ac Potentissimo Regi Persarum Clemens Papa IX

Illustris ac potentissime rex salutem et lumen Divinae gratiae. Revertentem istuc venerabilem fratrem Archiepiscopum Armenum de Gheriam [sic for Erivam] literarum Nostrarum ad Celsitudinem Tuam commeatu prosequi volumus, tes ut ipsi ea dementiae ac benignitatis argumenta praebere digneris, quibus personas a Nobis commendatas excipere consueveris quaeque cum ipsum, tum alios Catholicos in eius Archiepiscopatu degentes tutos ac securos

Յարութիւն Քիւրտեանը, մէջբերելով պապական նամակը, արդարացիօրէն շարունակում է. «Առաքել ձեռք բերելով Պապական յանձնարարականը աճապարած չ'երեւար, ինչպէս որ պէտք էր նուիրելի մը Պարսկաստան երթալու ու իր նամակը Շահին ներկայացնելու: 1669-ին կը յիշուի Իտալիոյ Լուքքա քաղաքը գտնուիլը Ս. Դաւիթ Հայկազնի գերեզմանին ուխտագնացութեամբ: Հետզհետէ փոխանակ զինքը Երեւանի մէջ ժրջանօրէն նոր եկեղեցի մը շինելու զբաղմամբ գտնելու, իրեն կը հանդիպինք... Լոնտոն, նպաստահաւաքութեամբ զբաղեալ: Հոռոնէն մեկնելէ վերջ, որ հաւանաբար 1669 Փետրուարին տեղի ունեցաւ, Առաքելի մասին միայն նոյն տարին Իտալիոյ Լուքքա քաղաքը հանդիպիլը գիտենք»<sup>32</sup>:

praestare queant adversus insidias et iniurias schismaticorum, semper feralibus odiis et ubi possunt etiam factis in eos plusquam hostiliter saevientium. In primis autem idem Archiepiscopus cupit sibi tribui facultatem a Celsitudine Tua construendi ecclesiam in civitate de Erivam, quae sane res omnibus illarum regionum Catholicis magno qua solatio, qua spirituali profectui prorsus esset. Id autem largiri si voluntati regiae placuerit, iampridem benefactis suis devinctam caritatem Nostram novo et arcto benevolentiae vinculo sibi magis ac magis adiunget. Interim Nos assiduis precibus insistentes omni ex animo Altissimum oramus ut Celsitudini Tuae veritate penitus detecta felicitatem bonis omnibus affluentem impertiri pro summa Sua bonitate velit.

(Datum ut supra=) Romae apud S. Mariam Maiorem sub annulo Piscatoris die 13 Februarii 1669 pontificatus Nostri anna secundo.

32 Տե՛ս Յ. Քիրտեան, *Յակոբ կաթողիկոս Ջուղայեցի*, էջ 47: Լուկկայում՝ Ս. Միքայէլ հրեշտակապետի եկեղեցու դիւանում պահուող հայերէն ժԵ-ԺԷ. դդ. մի շարք վաւերագրերի մէջ կան նաեւ Դաւիթ Հայկազնի գերեզմանի ուխտի գնացած հայերի յիշատակագրութիւններ: Դրանցից մէկը հաղորդում է. «Ես Առաքել եպիսկոպոս Երեւանցի եկի Լուկայ, ուխտ արի սուրբ Դաւիթ ի թոյն Հայոց ՌժԺԸ [1669]» (տե՛ս Մեսրոպ վրդ. Ուղորդեան, *Պատմութիւն Հայոց գաղթականութեան եւ շինութեան եկեղեցւոյ անցա ի Լիվոննայ քաղաքի*, Վեներտիկ-Ս. Ղազար, 1891, 239):

Շարունակենք: Առաքել եպիսկոպոսը, ամենայն հաւանականութեամբ, Հոռոնից մեկնեց 1669 թ. մարտ ամսին: Այնուհետեւ նրա մասին անընդհատ լուրեր էին հասնում Հոռոն Իտալիայի տարբեր քաղաքներէց, միշտ՝ ոչ ի նպաստ նրա: 1669 թ. ապրիլի 29-ին Լիվոնոյում էին գտնուում Տէր Բարսեղն ու Տէր Յովհաննէս Հարովը, որոնք այդ պահին նեղութիւններ էին կրում տեղի ազգակիցներէց, եւ արդէն վախ կար, որ կարող են վճռուել քաղաքից: Տէր Բարսեղը երբեք չէր դադարում իր նամակներով զգուշացնել Ս. Ժողովին չխաբուել հայերից, «որոնք Հոռոն են գալիս, հաւատքի դաւանութիւն են տալիս, օրինակ Առաքել եպիսկոպոսը եւ [Սաի] իսաատուր կաթողիկոսը. սակայն խաբէութիւն է, որովհետեւ իրենց խօսքին հաւատարիմ չեն մնում»<sup>33</sup>: Նոյն թուի հոկտեմբերի 7-ին նոյն Տէր Բարսեղը կրկին գրում է. «Վստահելի կաթողիկէ հայերը Առաքել եպիսկոպոսի մասին, որ վերջերս Հոռոնում էր, ասում են՝ շրջեց ամբողջ Էտրուրիան՝ դրամ հաւաքելու համար: Վենետիկ հասնելով՝ հայերին ասել է, թէ ինքը Հոռոն է գնացել ոչ թէ հաւատքի խնդրով, այլ քաղաքը եւ տաճարները տեսնելու եւ թէ ինքն էլ է խօսել մեծ դքսի հետ մեզ Լիվոնոյից աքսորելու համար եւ թէ պատրազել է առանց ջրախառնութեան եւ [դաւանական] սրբագրութիւնների: Յայտնել է նաեւ իր ծրագիրը՝ ունեցած յանձնարարականներով անցնելու Ֆրանսիա, Իսպանիա, դրամ հաւաքելու համար: Շատ վատ է Հոռոն եկող ամէն մէկին յանձնարարականներ տալ, որոնք ծառայում են միայն դրամ հաւաքելու համար»<sup>34</sup>:

1669 թ. յուլիսին Առաքելը Վենետիկում էր, ուր Երեւանում կաթողիկէ եկեղեցի կառուցելու վերաբերեալ խնդրագրեր է ներկայացնում պետական իշխանութիւններ:

33 Տե՛ս SC Armeni, vol. I, f. 541-542:  
34 Տե՛ս SC Armeni, vol. I, f. 348:

րին՝ ստանալով համապատասխան յանձնարարական նամակներ, ինչպէս նաեւ՝ Վենետիկի սենատի լատիներէն նամակն՝ ուղղուած շահին<sup>35</sup>:

Վենետիկից յետոյ Առաքելը Միլանում էր, որի արքեպիսկոպոսը՝ կարդինալ Լիտտան (Liitta), 1669 թ. սեպտեմբերի 25-ին գրում է Հաւատաստիւոսի քարտուղար Բալդեսքին. «Քաղաքիցս անցաւ գերապայծառ Առաքելը ու անկեղծ լինելով, տարակուսեցի ընդունել իրեն, որովհետեւ մի քանի տարի առաջ քաղաքիցս անցաւ մի ուրիշը, որին պատիւ ունեցանք ընդունել, յետոյ պարզուեց, որ անպիտան մէկն էր, իսկ երկու տարի առաջ Վենետիկի մէջ շրջում էր մի հայ կաթողիկոս (իմա՝ Սաի իսաատուր գաղատացի կաթողիկոսը) եւ առաքելական նուիրակը հրահանգ ստացաւ բանտարկելու նրան, իսկ ես Հոռոնում տեսել էի նոյն անձին պատիւներէ մէջ: Վենետոյի շրջանի եպիսկոպոսները շատ սիրով ընդունեցին յիշեալ արքեպիսկոպոսին, ես էլ իմ հերթին մի քանի օր պահեցի մօտս՝ տալով այն-օգնութիւնը, որ Աստուծուց ներշնչուեցի, ապա յանձնարարական նամակով ուղարկեցի Como, որտեղից մտադիր էր ճանապարհը շարունակել դէպի Ispruch»<sup>36</sup>:

Առաքել եպիսկոպոսը Լեհաստանում

1669 թ. տարին չաւարտուած, Առաքել եպիսկոպոսը Լեհաստանում էր, ուր մնաց մօտ երեք ամիս: 1669 թ. յունուարի 1-ին վարչաւայի եպիսկոպոսը (Arcivescovo Corinto) գրում է Հաւատաստիւոսի քարտուղարին՝ իր մտահոգութիւնները յայտնելով Առաքել եպիսկոպոսի մասին: Մտահոգու-

35 Վեներտիկի սենատի որոշումը տե՛ս Berchet Guglielmo, *La Repubblica di Venezia e la Persia*, Torino, 1865, Doc. LXIII, LXIV, pp. 244-245:  
36 Տե՛ս SOCG, vol. 421, f. 385: Իմա՝ Արկայիս Տիրոյի (արեւմտեան Աւստրիա) գլխաւոր քաղաքը՝ Ինսբրուկ (Innsbruck):

թեան պատճառը հետեւեալն էր. Առաքել եպիսկոպոսը Վարչաւայի եպիսկոպոսի համակրանքը շահելու համար ցուցադրել էր ունեցած վկայականները, այսինքն՝ Հոռոմոս գերապայծառ Կազանետէի (Casanete) վկայութեամբ կատարած հաւատոյ դաւանութեան եւ հերձուածողութիւնից ազատուելու, կարդինալներ Զինետից (Ginetti) եւ Օրսինոյից (Orsino) ստացած վկայականները, նաեւ՝ պարսից շահին ուղղուած նամակները քահանայապետից, Վենետիկի հանրապետութիւնից եւ կայսրից, սակայն զուրկ էր զանազան երկրների առաքելական նուիրակներին ուղղուած Ս. Ժողովի յանձնարարական գրերից: Երբ Վարչաւայի եպիսկոպոսն իր տարակուսանքն է յայտնում Առաքելին, վերջինս պատասխանում է, որ իր սկզբնական ծրագրում չկար Լեհաստան ուղեւորուելը, սակայն յետոյ Առաքելը մատնում է ինքն իրեն՝ ասելով, թէ ծրագիր ունի Լեհաստանի թագաւորից էլ Շահին ուղղուած նամակ ստանալ ի նպաստ կաթողիկէ վարդապետութեան տարածման:

Վարչաւայի եպիսկոպոսն այս նամակով յայտնում է իր եւս մէկ տարակուսանքը՝ Առաքելն իր ներկայութեամբ կարող է խոռովել երկրի հայոց խաղաղութիւնը, եւ վերջիններս կրկին կը վերադառնան իրենց նախկին հերձուածին: Բայց քանի որ Հոռոմից հակառակ գործելու ոչ մի հրահանգ չէր ստացել, չի ընդդիմանում Առաքելին: Նամակն ակարտում է իր բացայայտ անվստահութեամբ Առաքելի նկատմամբ. «Մինչեւ չտեսնեմ Լեհաստանից նրա դուրս ելնելը, պիտի վախենամ նրա խարդախութիւնից»<sup>37</sup>:

Լեհաստանի նոյն առաքելական նուիրակը 1670 թ. յունուարի 22-ի թուակիր նամակով տեղեկացնում է Հաւատաստափիւռ ժողովին, թէ «Պարսկաստանի Երեւան (քաղաքի) գերապայծառ հայ արքեպիսկոպոսն

37 Տե՛ս SOCG, vol. 425, f. 389:

այստեղ՝ յիսուսեանների վարժարանում մի քանի շաբաթ մնալուց յետոյ մեկնել է Լէոպոլիս՝ իր հայրենակիցների հետ տեսակցելու նպատակով (կամ կարծում եմ, աւելի հաւանական է ասել՝ դրամ հաւաքելու համար): Ինձնից խնդրեց յանձնարարական նամակներ՝ ուղղուած Բոգդանիայի (Bogdania) եպիսկոպոսին եւ Պիդուին, եւ ես տուի, բայց՝ չոր եւ կտրուկ բովանդակութեամբ, իսկ կողմնակի կերպով լուր հասցրի նրանց, որ հսկեն նրան ոչ միայն Լէոպոլիս, այլեւ Կամենիցի կամ ուրիշ քաղաքներում կամ այնտեղ, ուր մեկնում է տեսակցելու հայերի հետ»<sup>38</sup>:

Վարչաւայից մեկնելուց մի շաբաթ յետոյ՝ 1670 թ. փետրուարի 1-ին, Առաքել եպիսկոպոսը հասնում է Լէոպոլիս, ուր մնում է մինչեւ փետրուարի 27-ը: Պիդուին հրահանգ էր ստացել հետեւել Առաքելի քայլերին եւ այդ մասին տեղեկացնել թէ՛ Լեհաստանի առաքելական նուիրակին եւ թէ՛ Հաւատաստափիւռ ժողովին: Նրա ուղարկած մարտի 7-ի նամակից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները. Առաքել եպիսկոպոսը յանձնարարական նամակների շնորհիւ ամենուր գտնում էր հիւրասիրութիւն եւ յատկապէս՝ դրամական օգնութիւն՝ թագաւորներից ու իշխաններից. այսպէս՝ կայսրից՝ 100 հունգարական (ungari), Լեհաստանի թագաւորից՝ 50, նրա մօրից՝ 10, նմանապէս նաեւ ուրիշներից: Առաքել եպիսկոպոսը Լէոպոլիսում եղած շրջանում չի կարողանում շահել ո՛չ իր ազգակիցների եւ ո՛չ լատինների համակրանքը: Մանաւանդ որ իր կեանքով եւս գայթակղում էր նրանց, ուստի թէ՛ լատինները եւ թէ՛ հայերը խնդրում են Պիդուին, որ այս մասին տեղեկացնի Հոռոմ՝ Ս. Աթոռին: Այնուհետեւ Պիդուին, իբրեւ հայ եկեղեցու կառուցուածքին ու պատմութեանը տեղեակ անձ, ի գիտութիւն Հաւատաստափիւռ ժողովին, բացատրում ու յստա-

38 Տե՛ս SOCG, vol. 425, f. 390:

կեցնում է որոշ կէտեր: Այսպէս՝ տեղեկացնում է, թէ Առաքել եպիսկոպոսի՝ «Երեւանի եպիսկոպոս» տիտղոսը սուտ ու կեղծ է, հակառակ որ կասկած չունէր չորս կաթողիկոսութիւնների մէջ փոքրագոյնի՝ Աթթամարի կաթողիկոսի կողմից տրուած նրա եպիսկոպոսական ձեռնադրութեան վկայականի իսկութեանը: Առաքել եպիսկոպոսի վկայականից յայտնի է, որ նա ծնուել էր Երեւանում եւ Կեչառիսի եպիսկոպոսն էր: Եւ որպէսզի Ս. Աթոռը նման պարագաներում չխաբուի, Պիդուին յստակեցնում էր, որ Հայաստանում արքեպիսկոպոսական աթոռները չորսն են՝ Ս. Թաղէոսի (Արտազ), Սուրբ Նշանի (Տաշիր - իմա՛ չաղբատ), Ս. Թաղէի (Տաթեւ) եւ Բջնիի, իսկ պատրիարքարանները երկուսն են՝ Երուսաղէմի եւ Պոլսի ու Հալէպի, որոնք զրկուած են իրաւասութիւններից:

Առաքելը ձեռք է բերում մի շարք յանձնարարական նամակներ՝ ուղղուած պարսից շահին, որպէսզի Երեւանում լատինների համար եկեղեցի կառուցի: Պիդուին նկատել է տալիս, որ այս գործը չի կարող իրականութեանը համապատասխանել, որովհետեւ Առաքել եպիսկոպոսը չունի հեղինակութիւն նման գործ ձեռնարկելու համար, մանաւանդ որ այնտեղ չկան լատիններ, եւ առաւել տրամաբանական է, որ տեղական մի շարք եկեղեցիներից մէկը յատկացուի լատիններին՝ փոխանակ նոր եկեղեցի կառուցելու պատրուակով արքեպիսկոպոսը, վտանգների ենթարկուելով, շրջի ամբողջ աշխարհը:

Պիդուին իր նամակում ակնարկում է Առաքել եպիսկոպոսի՝ եկեղեցական պաշտամունքի վերաբերեալ տգիտութիւնն ու անտարբերութիւնը եւ սրա հետ միասին՝ դրամ հաւաքելուն չափազանց հետամուտ լինելը: Առաքել եպիսկոպոսը մէկ անգամ միայն, այն էլ՝ մեծ դժուարութեամբ, պատրագել էր Լէոպոլիսում եւ մէկ անգամ էլ Հոռոմում վեցամսեայ բնակութեան շրջա-

նում, «առանց որեւէ ջերմեռանդութիւն եւ քրիստոնէական բարեպաշտութիւն ցոյց տալու, եկեղեցիներում մնալով փայտի կտորի նման. մի օր ձեռքը ժամագիրք չէին տեսել»: Մինչդեռ սրա կողքին Առաքելը համարձակութիւն ունի դրամ հաւաքելու նոյնիսկ վանականներից (կարմեղեանների մեծաւորից մուրացել էր նոյնիսկ մէկ ֆիորին), ինչը մատնանշում էր այլ դիտաւորութիւններ, այլ ոչ թէ եկեղեցի կառուցելու ծրագրեր: Ժողովուրդը գայթակղուած էր՝ տեսնելով, որ Տեառնընդառաջի տօնին եւ Բուն բարեկենդանին Առաքել եպիսկոպոսը, հիւանդ ձեւանալով, եկեղեցի չէր գալիս, մինչդեռ ճաշերի եւ ընթրիքների հրաւերները սիրով էր ընդունում:

Պիդուին նամակն ամփոփում է՝ մատնանշելով այն գայթակղութիւնը, որ Առաքելը կարող էր առաջ բերել Լէոպոլիսում թելադրելով Ս. Ժողովին գրել Փարիզի առաքելական նուիրակին, որ որեւէ հնարքով գրաւի Առաքել եպիսկոպոսին տրուած վկայականները օտարների առաջ Ս. Աթոռի վարկը փրկելու համար<sup>39</sup>:

Առաքել եպիսկոպոսը Փարիզում եւ Լոնդոնում 1670 թ. մայիսի 30-ին Փարիզի առաքելական նուիրակը (Mons. Bargellini), հաւանաբար Ս. Ժողովի յանձնարարական նամակին պատասխանելով, տեղեկացնում է, թէ շաբաթներ առաջ Փարիզում էր Ոսկան վարդապետը, ով «ինքն իրեն կոչում էր Երեւանի արքեպիսկոպոս»: Նա անցել է Մարսիլիա, որտեղ զբաղւում է տպագրական գործով: Նուիրակն ակնարկում է. «...իսկ հայագրի Առաքելի մասին, որ ակնարկում էք, մէկ անգամ կարողացայ տեսնել»<sup>40</sup>:

Նոյն նուիրակը 1670 թ. յուլիսի 4-ին կրկին գրում է Հաւատաստափիւռ ժողովին,

39 Տե՛ս SC Armeni, vol. I, f. 633-634:  
40 Տե՛ս SC Armeni, vol. I, f. 648:

որ ստացել է իրեն տրուած՝ ապրիլի 22-ի հրահանգը Առաքել արքեպիսկոպոսի նկատմամբ եւ հնարք է մտածել՝ ինչպէս, առանց գայթակղութիւն պատճառելու, բռնագրաւել Առաքելին տրուած բոլոր յանձնարարական նամակները: Սակայն ճիշտ այն պահին, երբ պապական նուիրակը մտածում էր, թէ պիտի յաջողէր իր ծրագրում, Առաքել եպիսկոպոսն անակնկալ կերպով փախչում է քաղաքից՝ ուղղուելով Անգլիա: Փարիզի նուիրակը խոստանում է նոյն օրն իսկ գրել Ֆրանսիայի փոխնուիրակին, ով պատասխանատու էր Անգլիայի կաթողիկէ եկեղեցուն, որ իրագործէր վերոյիշեալ ծրագիրը<sup>41</sup>:

Բրիւսէլի առաքելական նուիրակը 1670 թ. օգոստոսի 16-ի իր նամակով հաղորդում է Հաւատաստութիւն ժողովին, թէ ընդունել է Փարիզի նուիրակի՝ Առաքել եպիսկոպոսի ունեցած վկայականները գրաւելու հրահանգը եւ ըստ այդմ գրել է Լոնդոնի իր մտերիմներին ու աջակիցներին, որ որեւէ հնարքով իրագործեն այդ ծրագիրը<sup>42</sup>:

Հոկտեմբերի 4-ին Հաւատաստութիւնի քարտուղար Բալդեսքին հաղորդում է հետեւեալը. «Հայ Առաքել արքեպիսկոպոսը եղաւ Անգլիայում, ուր շատ յարգալից ընդունելութիւն գտաւ շնորհիւ զանազան իշխաններից ստացած յանձնարարական եւ արտօնագիր նամակներին: Նախ գնացել էր Ամստերդամ՝ նաւարկելու դէպի արեւելք, սակայն, նաւ չգտնելով եւ առիթ ունենալով, անցել էր Լոնդոն՝ այնտեղից նստելու դէպի արեւելք գնացող նաւ: Հայր Օուարդը (Ovard) խոհեմ է համարել օգնել նրան՝ նկատելով, որ Առաքելը նամակներ ու վկայականներ ունէր Հռոմից ու այլ վայրերից, եւ տեսնելով, որ լաւ մարդ է ու գայթակղութեան առիթ չի տուել

41 Տե՛ս SOCG, vol. 425, f. 387:  
42 Տե՛ս SOCG, vol. 425, f. 381:

մայրաքաղաքի մէջ, նրան ընծայել էր նոյնիսկ իր անձնականից հարիւր սկուզ՝ իբր ճանապարհի օգնութիւն: [Անգլիայի Կարլոս Բ.] թագաւորը նրան պարսից շահին ուղղուած յանձնարարական նամակ էր տուել, որի օրինակը կցում եմ, իսկ Եորքի դուքսը նրան յանձնարարել էր նաւային ընկերութեանը, եւ այսպէս մեկնել էր: Հայր Օուարդը (Ovard) գրում է, թէ ուշ է ստացել նամակս, ուր իրեն յանձնարարել էի վերցնել Առաքելի ձեռքից յանձնարարական նամակները: Սակայն հասկացայ, որ նա ճիշտ ժամանակին էր ստացել նամակս, բայց չէր համարձակուել գործարել վախենալով, որ չի յաջողի, որովհետեւ Առաքելը դիմել էր նաեւ թագաւորին»<sup>43</sup>: Հաւատաստութիւն ժողովի դիւանում այս նամակին կից կայ նաեւ Անգլիայի Կարլոս Բ. թագաւորի նամակը, որի մասին ակնարկում է Բրիւսէլի նուիրակը<sup>44</sup>: Ահա այդ նամակի գլխաւոր հատուածները՝ Յ. Քիւրտեանի թարգմանութեամբ.

«Չարլզ, շնորհիւ Աստուծոյ թագաւոր Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Իրլանտայի, առ բարձր եւ ահեղ իշխանդ, Տէր, սուրբան, Շահ Ապպաս իսան, թագաւոր պարսից եւ Մարաց նաեւ Հայոց: Մեր եղբայր եւ շատ սիրելի բարեկամ, ողջոյն, ձեր բոլոր հարստութիւնը բարգաւաճի:

Ամենաբարձր եւ ահեղ իշխան, եղբայր եւ սիրելի բարեկամ:

Ինչպէս որ Եւրոպայի քանի մը ինքնակալները դիտած են այս նամակները բերող մեծայարգ Հայաստանի արքեպիսկոպոս Առաքելի մասին, անոր շատ մեծ խոհեմութեամբ եւ եզակի եռանդով մեր քրիստոնէական կրօնքին համար կատարածին, եւ ներութիւն կրած են (Եւրոպայի ինքնակալները) նամակներով շարժելու Ձեր Վեհափառ Բարձրութեան (գութը) ... Ի նպաստ բարեպաշտ ճիղերուն (Առաքելի) իր եկեղեցւոյն երեւանի քաղաքին մէջ ըստ իր արարողութեան կա-

43 Տե՛ս SOCG, vol. 425, f. 383:  
44 Տե՛ս SOCG, vol. 425, f. 384:

տարելու: Մենք, ձեռնպահ մնալով շցանկալով այսպիսի գովելի գործէ մը եւ ոչ այնուշադիր մնալ հասարակաց կամքին, նաեւ հաւատալով որ Մեր միջամտութիւնը Ձերդ Վեհափառ Բարձրութեան քով պիտի ունենայ ոչ փոքր ազդեցութիւն... երախտագիտութեամբ պիտի ընդունինք Ձեր Վեհափառ Բարձրութեան շնորհատուութիւնը...»

Նամակում խօսուում է նաեւ առեւտրի մասին.

«...որ մեր հպատակները կ'ընեն Ձեր Վեհափառ Բարձրութեան սահմաններուն մէջ...»:

«... եւ Մենք մեծ փափաքով պիտի ընկալենք ներկայացուած առիթները Ձեր Վեհափառ Բարձրութեան լաւ կերպով արժանի ըլլալու: Վերջապէս, Ձեր Վեհափառ Բարձրութիւնը Մենք սրտանց Աստուծոյ խնամքին կը յանձնենք:

Տրուած Ուհայդհոյի Պալատին մէջ, Տրդ օր Օգոստոսի 1670

Ձերդ Վեհափառ Բարձրութեան լաւ եղբայրը եւ բարեկամը:

Չարլզ Թ(ագաւոր)»<sup>45</sup>:

\*\*\*

Վերոբերեալ բոլոր նամակները, որոնք ընդհանրապէս արտայայտուում են ոչ յօգուտ Առաքելի, յաջորդաբար ղեկուցուած են Հաւատաստութիւն ժողովի 1670 թ. դեկտեմբերի 18-ի նիստին: Նիստի քարտուղարը տեղեկացնում է ժողովին մասնակից կարգինալներին, որ Կղեմէս Ժ. պապի ընտրութեանը մասնակցելու համար որոշ ժամանակ նիստերն ընդհատուել էին, եւ իրենց բացակայութեան ժամանակ ստացած նամակների հիման վրայ ինքը հրահանգներ էր տուել առաքելական նուիրակներին, որ բանտարկել տան Առաքել եպիսկոպոսին կամ գոնէ ձեռքից խլեն յանձնարարական

45 Անգլերէն բնագիրը տե՛ս [H. Chick], *A Chronicle of the Carmelites in Persia...*, vol. I, p. 412: Բերում է Յ. Քիւրտեանի արեւմտաճապերէն թարգմանութեամբ (տե՛ս Յարութիւն Քիւրտեան, *Յակոբ Ջողապէցի*, էջ 48):

նամակները: Նա առաջարկում է ժողովականներին այդուհետեւ նման խաբէութիւնները կանխելու համար հեշտութեամբ չտալ յանձնարարական նամակներ, որոնք կը ծառայեն ապօրինի դրամ հաւաքելու գայթակղութեանը<sup>46</sup>:

Բրիւսէլի նուիրակի՝ 1670 թ. հոկտեմբերի 4-ի նամակից դատելով՝ Առաքել եպիսկոպոսը սեպտեմբերին պէտք է արդէն մեկնած լինէր Լոնդոնից՝ դէպի արեւելք նաւարկելով: Այնուհետեւ վեց տարի նրա հետքը կորցնում ենք, բայց 1676 թ. նրան գտնում ենք Երեւանում՝ արքեպիսկոպոսական աթոռի վրայ: Այդ մասին ստորեւ:

Ազարիա Աւագ եւ Առաքել եպիսկոպոս Երեւանի

Հռոմ գալով՝ Առաքել եպիսկոպոսը ներկայանում է որպէս գործակից Ազարիա Աւագի, ով Հռոմի Աթոռին ծանօթ անձ էր: 1670 թ. յետոյ, երբ Առաքելը վերադառնում է Հայաստան, երկար տարիներ նրան Ազարիայի կողքին չենք տեսնում: Պատկերն ամբողջացնելու համար բերենք մի շարք լրացուցիչ տեղեկութիւններ Ազարիայի մասին, ով, լինելով գլխաւոր դերակատարը, երկար աշխատանքներից յետոյ յաջողում է Առաքելի Աթոռը հաստատել Երեւանում:

Վերելում ծանօթացանք Երեւանի կաթողիկէ մատրան պատմութեան վերաբերեալ վեղարաւոր կրօնաւորների վկայութիւններին: 1670 թ. հոկտեմբեր 1-ին Հ. Յովսէփ Անտոնիո (P. Giuseppe Antonio) Յովսէփ Անտոնիո (P. Giuseppe Antonio) Հալէպից գրում է Հաւատաստութիւն ժողովին՝ համառօտելով նոյն պատմութիւնը, ընդգծելով յատկապէս Ազարիայի արժանիքները, նրա կաթողիկէ դաւանութիւն տալը վերջապէս Հ. Գաբրիէլ Շինոնին<sup>47</sup>: Յիշեալ

46 Տե՛ս Acta, vol. 39, f. 276, n. 28:  
47 Տե՛ս SOCG, vol. 426, f. 114-119: Հ. Յովսէփ Անտոնիոյ տեղեկութիւնները լրացնում են վեղարաւորների դիւանական փաստաթղթերը: Այսպէս Ջողապէցի, էջ 48):

նամակը զեկուցուած է Հաւատաստիւն ժողովի 1671 թ. յունուարի 12-ի նիստին, ուր որոշուած է գրել Ֆրանսիայի, Վենետիկի եւ Ֆիրենցէի առաքելական նուիրակներին, որ պետական իշխանութիւնների միջոցով ճնշում բանեցնեն այդ երկրների քաղաքներում բնակուող Հայ վաճառականների վրայ ի պաշտպանութիւն Երեւանում գտնուող կաթողիկէներէ<sup>48</sup>:

Որոշման Համաձայն՝ նոյն օրն իսկ գրուած են նամակները, եւ նկատելի է, որ պատասխանները չեն ուղանում:

1671 թ. փետրուարի 7-ին Վենետիկի նուիրակը (Arcivesv. di Cartagina) գրում է. «Անցեալ ամսի 12-ին գրած ձեր նամակով ինձ մի գործ յանձնարարեցիք. կ'ուզէիք, որ տեղիս Հայերը գործեն ի նպաստ Երեւանի կաթողիկէների, մանաւանդ որ այնտեղ վարդապետներն ու եպիսկոպոսները վատ են վարուել Ձաքարիա Ագաղի (իմա՛ Ագարիա Աւագ) կաթողիկէ Հայերի Հետ: Քաղաքիս Հայերից շատերը Երեւանից լինելով, պիտի գրեն Երեւան ի նպաստ կաթողիկէութեան, որի փոխարէն այստեղ իրենց վաճառականութեան Համար նպաստաւոր վիճակ պիտի ունենան»<sup>49</sup>: 1671 թ. մարտի 7-ին նոյն նուիրակը գրում է Հաւատաստիւնի փոխարտուղար Քերրին, որ այս Հարցը ներկայացրել է Վենետիկի ծերակոյտին՝ թելագրանքով, որ նոյն վարուելակերպը ցոյց տրուի քաղաքի Հայերին, եթէ նրանք շարունակեն նեղել Երեւանի կաթողիկէներին<sup>50</sup>: Նոյն այդ նամակին կից կայ Վենետիկի ծերակոյտի անթուակիր նամակը՝ ուղղուած Վենետիկի նուիրակին, որով խոստանում են նկատի առնել պապի ցանկութիւնը՝ այս անպատեհութեան առաջն առնելու, այսինքն՝ եթէ Երեւանի Հայերը շարունակեն նեղել կաթողիկէներին, քաղաքիս Հայերն էլ պէտք է բախուեն նոյն վարմունքի Հետ<sup>51</sup>:

Հաւատաստիւնի քարտուղարութիւնը թողել է մի ծանօթագրութիւն, ուր ասուած է, որ այս նոյն արուել է նաեւ Ֆիրենցէի նուիրակի ձեռքով՝ խնդրելով քաղաքի դքսի միջամտութիւնը՝ Լիվոնոյի Հայերի նկատմամբ գործադրելու նոյն ճնշումը: Ունենք Ֆիրենցէի նուիրակի 1671 թ. փետրուարի 28-ի պատասխան նամակը, որ ինքը կատարել էր պարտքը՝ դիմելով դքսին<sup>52</sup>:

Ֆրանսիայի առաքելական նուիրակն էլ (Թեբէի արքեպիսկոպոս) 1671 թ. մարտի 20-ի նամակով տեղեկացնում է Հաւատաստիւն ժողովին, որ դիմել է գերապաճառ Ռէ Լիոննէին (Mons. Re Lionne) Երեւանի Հայոց վարմունքին Հակառակ, եւ թէ նոյն անձը խոստացել է զգուշացնել թագաւորին, որ նոյն ճնշումը բանեցնեն իրենց Հպատակ Հայերի վրայ՝ միշտ ի նպաստ Ձաքարիայի (իմա՛ Ագարիա Աւագ)<sup>53</sup>:

Հաւատաստիւն ժողովի 1671 թ. օգոստոսի 3-ի նիստին զեկուցուած է Վրաստանի վեղարաւորների մեծաւոր Հ. Ստեֆանո դը Ամելիա-ի (Fr. Stefano d'Amelia) 1670 թ. մայիսի 20-ի նամակը, որով Ագարիայի անձը դրուատելուց յետոյ տեղեկացնում է, որ նա ուղղուել է Հռոմ, յանձնարարում է սիրով ընդունել նրան եւ դրամով աջակցել<sup>54</sup>:

50 Տե՛ս SOCG, vol. 440, f. 62:  
 51 Տե՛ս SOCG, vol. 440, f. 63:  
 52 Տե՛ս SOCG, vol. 440, f. 64:  
 53 Տե՛ս SC Armeni, vol. 2, f. 7:  
 54 Տե՛ս SOCG, vol. 429, f. 380-381:

պէս, երիտասարդ Ագարիան ողեկցում էր Գարիել Օհանյան իր առաքելավայր՝ Թարիզ մեկնելիս: Ագարիայի կաթողիկէ դատնալը Ուրմիայում թուագրում եմ 1660 թ. (աւելի մանրամասն տե՛ս Raymond H. Kévorkian, *Diplomatie et mouvement de libération arménien de la guerre de Candie au siège de Vienne (1683)*, - «Moyen-Orient et Océan Indien», VI, Paris, 1989, Annexes, doc. 7, p. 40):

48 Տե՛ս Acta, vol. 41, f. 16, n. 28:  
 49 Տե՛ս SC Armeni, vol. 2, f. 5:

ժողովի պատասխանն է՝ «Յորդորել վեղարաւորներին, որ ջանքեր թափեն արգելելու Ագարիայի ճամփորդութիւնը, որովհետեւ նա շատ աւելի մեծ բարիք կարող է անել ի նպաստ կաթողիկէութեան այդտեղ մնալով, քան Հռոմ գալով»<sup>55</sup>:

Հաւատաստիւն ժողովի 1672 թ. օգոստոսի 2-ի նիստին ներկայացուած է երկու նամակ ի նպաստ Ագարիայի: Նամակներից առաջինը գրուած է Նախիջևանի Ապարաւուրի գիւղից 1670 թ. յունիսի 8-ին Միշել Կորպորալէի (Michele Corporale) կողմից, իսկ երկրորդը՝ Թաւրիզից 1670 թ. յունիսի 8-ին Հ. Յովսէփ դա Բուրժի (Fr. Giuseppe da Bourges) կողմից: Երկու նամակագիրներն էլ շեշտում են չորս տարուց աւելի Ագարիայի կրած տառապանքները իր իսկ ազգակիցներից, զրգուած վարդապետներից, որոնք նրան մատնել էին Երեւանի խանին՝ իբրեւ իտալացի եւ Հռոմէացի՝ թոյլ չտալով Ագարիային իր որդուն տանել Ուրբանեան վարժարան ուսանելու<sup>56</sup>: Ժողովի որոշումն է լինում «դիմել պապին, որ յանձնարարական նամակ ուղարկի Պարսկաստանի շահին ի նպաստ Ագարիայի»<sup>57</sup>:

Եւ իրապէս, որոշման Համաձայն, 1672 թ. օգոստոսի 24-ին պապին դիմում է ուղղուած. «Երեւանի Ագարիա Ագաղը գրում է, թէ կաթողիկէ լինելու Համար Հերձուածող Հայերը նախատում են իրեն անարդար կերպով. ուստի խնդրում է ձեր սրբութիւնից մի նամակ պարսից շահին, որ վերստանայ իր ունեցուածքը»: Պատասխանը լինում է դրական. «Թող գրուի»<sup>58</sup>:

Պապի նամակը պէտք է որ ժամանակին գրուած լինէր եւ ուղարկուած Ագարիային: ԱՀա թէ ինչ էր գրում Թիֆլիսից վեղարաւորների մեծաւոր Հ. Սերաֆինո

55 Տե՛ս Acta, vol. 41, f. 260, n. 25:  
 56 Տե՛ս SOCG, vol. 435, f. 222-224:  
 57 Տե՛ս Acta, vol. 42, f. 209, n. 33:  
 58 Տե՛ս AP, Udienze, vol. 1, f. 109+143:

դա Մելիկոկոն (Fr. Serafino da Melicocco) 1673 թ. յուլիսի 25-ին. «Ստացայ Նորին սրբութեան կոնդակը (Breve)՝ գրուած ի նպաստ Հայ կաթողիկէ Ագարիա Ագաղին, որը 15 օր առաջ Թիֆլիսից մեկնեց Թաւրիզ: Պէտք է ջանամ առաջին իսկ առիթով Հասցնել նրա ձեռքը»<sup>59</sup>:

Արդէն նշել ենք, որ Հռոմի Հաւատաստիւն ժողովը դիմել էր դանազան միջոցների ի նպաստ երբեւէ գոյութիւն չունեցած Երեւանի Հայ կաթողիկէների ազատութեան: Նոյն ջանքերը շարունակուած են մինչեւ 1673 թ., երբ Հաւատաստիւն ժողովի մայիսի 8-ի նիստին ներկայացուած են երկու տարի առաջ Վենետիկի եւ Ֆիրենցէի նուիրակներին յղուած նամակները: Ժողովի արձանագրութիւնում նշուած է. «Անցեալում ժողովս պատուիրեց գրել Վենետիկի եւ Ֆիրենցէի նուիրակներին, որ դիմեն Համապատասխան Ծերակոյտներին՝ Հասկացնելու նոյն քաղաքների Հայերին, որ եթէ իրենց Հայրենակիցները Երեւանի կաթողիկէների Հետ վատ վարուեն, այստեղ նոյն վերաբերմունքը պիտի իրենք տեսնեն: Ծերակոյտերը խոստացել են միջամտել»<sup>60</sup>:

Թէ ինչ աստիճանի է գործադրուել այս պատուէրը եւ Վենետիկի ու Լիւոնոյի Հայերը այս առթիւ արդեօք գրել են Երեւան, անդրադարձ կայ վերոյիշեալ Հ. Սերաֆինոյի 1673 թ. յուլիսի 25-ի նամակում, որով տեղեկացնում է պապի կողմից Ագարիային գրուած նամակը ստանալու մասին, ապա շարունակում է. «Այս առիթով ցանկանում եմ տեղեկացնել ձեզ, թէ ինչպէս այդ նոր կաթողիկէները, որ անցեալ տարի մեր դէմ երես դարձրին Հաւատաստիւնի պապին, զրգուած Հայոց կաթողիկոսից, եպիսկոպոսներից ու վարդապետներից եւ ազգի քահանաներից (ինչպէս նախորդ նամակներով տեղեկացրի կարդինալ-

59 Տե՛ս SOCG, vol. 447, f. 305:  
 60 Տե՛ս Acta, vol. 43, f. 120, n. 23:



արքեպիսկոպոստութիւնը, յանձինս Առաքել վարդապետի եւ որպէսզի յաջորդաբար ձեռքից չկորցնեն այն, քանի այդ բանը Նորին սրբութիւնն է իրեն շնորհել, մտածել է Ազարիա Աւագի հետ խնդրել ձեռ վսեմութիւնից, որ թոյլ տաք Ուրբանեան վարժարան ընդունել նոյն արքեպիսկոպոսի եղբորորդուն, որպէսզի ժամանակը հասնելուն պէս պատրաստ լինի այդ պաշտօնին: Եւ ինչքան կարելի է շտապ պիտի խնդրագիր ուղարկեն»<sup>67</sup>:

Շատ մեծ է գայթակղութիւնը Առաքելին նոյնականացնելու նոյնանուն այն վանականի հետ, որ յաւակնում էր բռնութեամբ ստանալու Հաւուց Թառի Ամենափրկիչ փայտեայ խաչը (Թ. դար)<sup>68</sup> եւ այն «Ֆարանգի երկիր տանել», ինչն արգելում է շահական հրովարտակով: Այսպէս, 1675 թ. փետրուար-մարտ ամիսներով է թուագրւում շահ Սուլէյմանի հրամանագիրը՝ արուած էջմիածնի Օնոփրիոս վարդապետի խնդրագրի հիման վրայ. «Աչխարհասատ հրամանագիր հրապարա-

67 Տե՛ս SOCG, vol. 458, f. 335:

68 Խօսքը «Ամենափրկիչ» անունը կրող փայտեայ փորագրագարի խաչի մասին է, որն ըստ գրատր աւանդութեան, բիզանդական վասիլ կայսերնուէրն է եղել Հայոց Գագիկ Ա թագաւորին (989-1017 թթ.): Վերջինս այն յանձնել է Քեղի բերդի տիրոջը՝ Գետրոգ իշխանին, որն էլ իր հերթին սրբութիւնը նուիրել է Հաւուց թառին եւ այստեղ եկեղեցի կառուցել: Ներկայումս Ս. Էջմիածնում պահուող «Ամենափրկիչ» խաչ-սրբութեան մասին անելի մանրամասն տե՛ս Գարեգին արք. Յովսէփեանց, Հաւուց Թառի Ամենափրկիչը եւ նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մէջ. Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւն. Զեկուցում Լեւոնգրադի Նիթական կուլտուրայի պատմ. ակադեմիայում, Երուսաղէմում, 1937; Der Nersessian S., L'Art Arménien, Paris, 1977, p. 114; Նոյնի, "Image Worship in Armenian", - Byzantine and Armenian Studies, Louvain, 1973, p. 410; Donabédian P., Thierry J.-M., Les arts arméniens, Paris, 1987, p. 128; Կարէն Մաթեոսեան, Հաւուց թառի վանքը, Երևան, 2012, Նոյնի, Հաւուց Թառի գրչութեան կենտրոնը, «Բանբեր Մատենադարանի», թիւ 11, էջ 159-172:

կուեց որպէսզի Չուխուր Սաադի բարձրաստիճան բեկլարեկը ամենալուսաւոր շարի անդամների ներկայութեամբ վերահասու լինի նկարագրուող խնդրի իրողութեանը եւ նրա ճշմարիտ լինելու դէպքում թոյլ չտալ ձեռագրում յիշատակուող Առաքելին որեւէ կերպ խնդրարկուին նեղել, խաչը, որը խնդրարկուի պապը վակֆ է արել յիշեալ վանքին, թողնել նրա տնօրինութեան տակ եւ այնպէս անել, որ բռնութիւն ու չարաշահում որեւէ մէկի հանդէպ տեղի չունենայ: Թող այս ընդունեն որպէս կարգադրութիւն ու այն իրենց պարտականութիւնը համարեն:

Գրուեց 1085 թ. սրբազան զի հեջըէ ամսին (իմա՛ 1675 փետրուար 26-մարտ 28):

Ամենանուաստ ծառայ Չուխուր Սաադում գտնուող Ուշիխիսա [վանքի] վարդապետ Ոնոփրիոսի խնդրագիրը

Տեղեկացնում է [Նորին] Մեծութիւնը, որ «Ամենափրկիչ կոչուող խաչը եւ Կարպիի նահիէում գտնուող Հաւուց Թառի վանքը, ժողովագրար նուաստիս են փոխանցուել իր պապերից, եւ վերոյիշեալ խաչը նուաստիս պապը վակֆ է արել նշուած վանքին: Սաֆի Ղուլի խանի օրօք (իմա՛ 1674-1679) Առաքել անունով մի վանական, բարձրագոյն պալատ գալով, կեղծ խնդրագիր էր ներկայացրել, թէ իբր այդ վանքի անունը Ղեզըլ Վանք է եւ ցանկանում էր այդ խաչը վերցնել ու ֆարսանգի երկիրը տանել: Նուաստս խնդրագրով դիմեց Սաֆի Ղուլի խանին: Վերջինս, այդ խաչը վերցնելով, նուաստիս տուեց, եւ տեսնելով, որ նրա պահանջն անհիմն է, ցանկացաւ նրան պատժել: Վերջինս փախուստի դիմելով՝ ապաստանեց Ալի Ղափուի հովանու (իմա՛ Օսմանեան կայսրութեան) ներքոյ: Այժմ նորից եկել է եւ ապօրինաբար նեղութիւն է պատճառում նուաստիս: Այս վանքի համար ամէն օր վէճ ու կռիւ է անում, բռնութեան դիմում: Խնդրում ենք արքայական ամենաբարձր սրբազնագոյն օրհնեալ ողորմածութեամբ Չուխուր Սաադի բարձրաստիճան բեկլարեկին ուղղուած արդարացի հրամանագիր շնորհել, որպէսզի նա վերահասու

լինի ճշմարտութեանը եւ նուաստիս ազատի նրա բռնութիւններից»<sup>69</sup>:

Սրանից յետոյ կորցնում ենք բոլոր հետքերը: Հրապարակի վրայ տեսնելով միայն Ազարիա Աւագին, որի մասին խօսուում է Հաւատասփիւռի 1681 թ. օգոստոսի 11-ի նիստին, ներկայացնելով նրան իբրեւ Մեծ Հայքի ազնուական ընտանիքից եւ Հաւատասփիւռ ժողովի աչքում շատ արդիւնաշատ: Ազարիան խնդրում է իր որդուն ընդունել Ուրբանեան վարժարան եւ յաջորդաբար յանձնարարականներ գրել ի նպաստ որդու, որպէսզի Ֆրանսիայի թագաւորի միջնորդութեամբ մտնի ֆրանսիական թագաւորական ընկերակցութեան մէջ, զանազան լեզուների իմացութեան շնորհիւ կարողանայ զբաղուել վաճառականութեամբ Հնդկաստանում եւ Պարսկաստանում: Ժողովն ընդունում է առա-

ջարկը, սակայն Ուրբանեան աշակերտների անուանացանկերում նրա անունը չենք հանդիպել<sup>70</sup>:

Տարիներ անց՝ 1699 թ. նոյեմբերի 23-ին, երբ Խաչատուր վրդ. Առաքելեանը (էրզրումցի) իբրեւ պապական նուիրակ էջմիածին է այցելում, իրեն յանձնուած առաքելութեան նկարագրութիւնը տալով, նամակի վերջում յիշում է «Հայ ազնուական, Ս. Ժողովի որդի» Ազարիայի անունը, ով ցանկանում էր իր ունեցուածքը նուիրել Հոռմի Ս. Աթոռին՝ պայմանով, որ մի լատին հսկի այն եւ ապահովի իր որդիներին տարեկան ծախսերը<sup>71</sup>:

Այսքանով սպառուում են մեր տեղեկութիւնները Ժէ. դարում ապրած ու գործած, իրեն «Երեւանի արքեպիսկոպոս» յորջորջող Առաքելի մասին:

69 Տե՛ս Մատենադարանի պարսկերէն վաւերագրեր, Ուր. Հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), կազմեց Ք. Պ. Կոստիկեանը, Երևան, 2005, էջ 100-101, վաւերագիր 41:

70 Տե՛ս Acta, vol. 51, f. 238-239, n. 23:

71 Տե՛ս SOCG, vol. 537, ff. 240-249:

ԱՌԱՔԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՇՈՌՈՅԻ  
(Բոպիկ) (1613-1680)

Առաքել արքեպիսկոպոս Շոռոթեցու մասին նախկինում ուսումնասիրություններ են կատարել Հ. Գրիգորիս Գալեմբարեանը<sup>72</sup> (որպես աղբիւր ունենալով Առաքելի մասին Ստեփանոս Ռօշքայի ժամանակագրությունից եւ Վարդան Յունանեանի «Թուղթ քաջալերական»-ից զոյգ ակնարկները, ինչպէս նաեւ՝ նրա տապանագիրը) եւ Յակոբ Անասեանը<sup>73</sup> (քիչ աւելի Հարստացնելով կենսագրական տեղեկությունները եւ փորձելով տալ Առաքել մատենագրի գրաւոր ժառանգությունը): Առաքել Շոռոթեցու մասին առաւել համառօտ անդրադարձներ ունեն Հ. Ղեւոնդ Ալիշանը<sup>74</sup> ու Մեսրոպ Ամբաստանցը<sup>75</sup>, իսկ աւելի ուշ՝ Աշոտ Յովհաննիսեանը<sup>76</sup> ու Յասմիկ Սիմոնեանը<sup>77</sup>:

72 Տե՛ս Հ. Գրիգորիս Գալեմբարեան, *Կենսագրություններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու*, Վիեննա, 1915 (Ազգային մատենադարան, ՀԸ), էջ 280-283: Առաքել Շոռոթեցու անունը բացակայում է նաեւ Հ. Աճառեանի ցանկերում (Տե՛ս Հայոց անձնանունների բառարան, հո. Ա, Երեւան, 1942):  
73 Տե՛ս Յակոբ Անասեան, *Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ.*, հո. Ա, Երեւան, 1959, էջ 1159-1162:  
74 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Սիսական*, Վենետիկ-Ս. Ղազար, 1893, էջ 350-352:  
75 Տե՛ս Մեսրոպ Ամբաստանց, *Եկարագիր սուրբ Կարապետի վանից Երանցակայ եւ շրջակայից նորա*, Թիֆլիս, 1904, էջ 52, 149, 260-261: Այս հեղինակը, յղելով Ալիշանին (տե՛ս *Սիսական*, էջ 350) Ս. Կարապետի վանահայրերի ցանկում 1630-ի տակ դնում է Առաքել Շոռոթեցու անունը, ինչն անկասկած պիտի է եւ Հ. Ղ. Ալիշանի մօտ էլ չկայ նման բան:  
76 Տե՛ս Աշոտ Յովհաննիսեան, *Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմության*, Երեւան, Գրիք երկրորդ, 1959, էջ 150, 163, 172-174, 218-219:  
77 Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, աշխատասիրություններ Յասմիկ Սիմոնեանի, հո. Բ, Երեւան, 1987, էջ 755-756:

Մատենագրական վկայություններ Առաքելի կեանքի առաջին շրջանի մասին մեր ձեռքի տակ չունենք: Շատ հրապուրիչ է 1650 թ. Շոռոթում գրուած ձեռագրաց յիշատակարաններից մէկում տեղի հոգեւորականներից մէկի կողմից յիշատակուող Առաքել վարդապետին նոյնականացնելն ապագայ Առաքել Շոռոթեցու հետ: Այսպէս. «...ի սուլտանութեանն Նախնականութեանն զուրուհն որդուին Մասուտին ի հռչակաւոր գեղս Շոռոթ, ընդ հովանեաւ Սուրբ Յակոբիս, Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Լուսաւորչիս, ձեռամբ ամենամեղ եւ թարմատար գրչի՝ Յովանէս սպասաւորի, ի խնդրոյ սրբասէր Տէր Հայրապետ կրօնաւորի, որ է ի սոյն գեղջէ: Եւ որ է հրաժարեալ ի բազմաց՝ ի գիւղէս եւ ի տանէ իւրեանց եւ ամենայն ընտանեաց, նա եւս եւ ամենայն կենցաղական հոգւոց, եւ այժմ կա ի գիւղաքաղաքն Ագուլիս, ի հռչակաւոր մենարանն եւ կուսարանն Սրբոյն Թովմայի, առ ոտս Խաչատուր բաբունապետի»<sup>78</sup>: Ընդ սմին եւս երկեղբարք՝ Տէր Առաքել վարդապետ եւ Տէր Յովանէս սմանակից եւ կաթնակից գոյով ի Տէր Հայրապետին, մէկն հոգեւոր սմանեամբ, երկրորդն՝ ի հոգեւոր եւ ի մարմնաւոր, քանզի զՏէր Առաքել վարդապետն աշակերտակցութեամբն միայն, իսկ Տէր Յովանէսն՝ անխմարմնաւոր գոյով, յոր եւ ի մի հօրէ եւ ի մի մօրէ ծնեալ են, եւ երկրորդ՝ աշակերտակցութեամբն: Այսպէս անեալ եւ վարժեալ եռակի եղբարքս այսոքիկ ի մի վարժարանում:

78 Իմա՛ Մովսէս Տաթևացու աշակերտներից խաչատուր վարդապետ Երանցակեցի (նրա մասին մանրամասն տե՛ս Հ. Ներսէս Ակիմեան, *Մովսէս Գ. Տաթևացի կաթողիկոս Հայոց յԷջմիածին եւ իր ժամանակը (1577-1633)*, նպաստ մը Հայոց Եկեղեցու պատմության, Վիեննա, 1935, էջ 215-217. Ազգային մատենադարան, ԸԼԹ):

Եւ թէպէտ եղբայր ասացաք գոյ Տէր Հայրապետն սոցին, ապա հայրօրէն գութ եւ խնամատարութիւն ոչ սակաւ ունէր ի վերայ նոցա: Թէպէտ արդ, ձերութիւն սոցին այլ իմն ներգործէ ըստ Սողոմոնի. Ոչ որ բազում ամանակեան է եւ ոչ որ թուով ամսոյն ձերութիւն, այլ ալիք իմն իմաստութեանն եւ այլն: Յոր եւ անցեալ ամս աստուածազամ վարդապետն խաչատուր գնալ կամեցաւ ի Սուրբ Երուսաղէմ, զՏէր Հայրապետն կարգեաց ի տեղապահութեան իրում, զՏէր Առաքելն եւ զՏէր Յովանէսն անեալ ընդ իր, ընդ այլ գործակալօք բազմօք գնաց, ի հասանելն ի Սուրբ Երուսաղէմ, ազդմամբ Հոգւոյն եւ Տէր Առաքելին վարդապետական իշխանութիւն: Թէ ինչպէս ընկալան զնա երուսաղէմացիք եւ կամ ինչպէս զգնալն եւ ի գալն, նա աստ ոչ պատկանաւորի առ ի պատմել: Եւ եւս յեւսայի վարդապետն ասեմ՝ զսքանչելին, որ է առաջնորդ մերում գեղիս, յոր եւ սա փայլէ ամենայն հոգեկանօք եւ մարմնականօք. նաեւ զայլս ոչ սակաւ զկնի բազմաւորական զթովն եւ յոգնահանճար ի մաստութեամբ իւրով: Յոր եւ սա այժմ իսկ ներկայումս նորոգէ զՍուրբ Կարապետն, քան զամենեսեան գերագոյն գոյով բարձրաբերձիւն եւ հաստակաւորց հիմամբն: Արդ, ոչ բազում մնացորդք գոն պարսպին եւ խցերուն, զի ի գալ ամի կատարելոց է: ... Յորում եւ զեկեղեցիս Շոռոթու, որ կոչի Սուրբ Յակոբ, նորոգեալ եղև յայսմ տարիջ բազմական աշխատութեամբ»<sup>79</sup>: Եթէ ճիշտ է այս նոյնականացումը, ապա Առաքել Շոռոթեցին իր վարդապետական աստիճանը ստացել է 1649 թ. Երուսաղէմում ուխտաւորական այցելութեան ժամանակ Խաչատուր Երնջակեցու կողմից:

79 Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ, հո. Գ (1641-1660 թթ.), կազմեց Վ. Յակոբեան, Երեւան, 1984, էջ 103-104: Հմմտ. Մայրցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուն մատենադարանի, հո. Գ, ձեռ. 779, էջ 699:

Մատենագրական վկայություններ Առաքել Շոռոթեցու մասին, հաւաստիօրէն, սկսում են 1652 թուականից: Այդ թուին Երուսաղէմում էջմիածնի Փիլիպպոս եւ Սսի Սիմէոն կաթողիկոսները եւ Երուսաղէմի Աստուածատուր Տարօնեցի պատրիարքը գումարել են եկեղեցական ժողով, Առաքել Դաւրիթեցու ձեռակերպմամբ՝ «ի սէր եւ միաբանութիւն երկուց աթոռոց կաթողիկոսացն էջմիածնի եւ Սոսոյ»<sup>80</sup>: Ժողովին մասնակցելու համար Փիլիպպոս կաթողիկոսը մեծ պատուիրակութեամբ Երուսաղէմ է հասել 1651 թ. հոկտեմբերին<sup>81</sup>: Մարտիրոս Ղրիմեցին իր չափածոյ ստեղծագործություններից մէկում բերում է վիճակագրական տուեալներ հոգեւոր ու աշխարհիկ ժողովականների մասին.

«Այլ եւ ի թիւ համօրէն մեծի եւ փոքրիմ, Ասասցուք ի կարգի զի յայտնի լիցին, Երկու կաթողիկոս գլուխք ժողովիմ, Տասն եւ ութ վարդապետ[ք] կան ի միասին:

Լուարուք ի կարգի ասացեալն բանիմ, Ութն եպիսկոպոս ի թիւ համարիմ, Կրանաւորք երեսուն եւ հինգ աւելիմ, Ամենեքեան վաթսուն եւ երեք լինին:

Էրեցք որ աշխարհի քահանայք կոչին, Վաթսուն եւ այլ աւել եւ նոքա լինին, Սարկաւազք եւ դպիրք ի թիւ ոչ մտին, Զանձրիթիւն լսողացոյ զի մի՛ լինիցին:

80 Ժողովի գումարման հանգամանքների ու ընդունումն որոշումների մասին տե՛ս Մաղաքիա արքեպ. Օրմանեան, *Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցու անցքերը սկզբէն մինչեւ մեր օրերը*, Ս. Էջմիածին, 2001, §§1687-1691: Հմմտ. Աստուածատուր եպս. Տ. Յովհաննէսեան, *Ժամանակագրական պատմություն Ս. Երուսաղէմի*, հո. Ա, Երուսաղէմ, 1890, էջ 339-340. Տիգրան Հ. Թ. Մատենեան, *Պատմություն Երուսաղէմի*, հո. Ա, Գրաբար բնագիրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ եպս. Նշանեան, Երուսաղէմ, 1931, էջ 594-596:

81 Մաղաքիա արքեպ. Օրմանեան, *Ազգապատում*, էջ 2856:

Բայց թե ժողովս ամէն ի մի հաւաքին, Ըսկսեալ ի մեծաց մինչեւ ցփոք[ը]ին, Ռ (100) կամ այլ աւել գոյ թիւ ժողովին, Որք եւ յուսով եկեալ յերկրպագութիւն»:

Մարտիրոս Ղրիմեցին, անուանապէս թուարկելով ժողովական եկեղեցականներին, Փիլիպպոս կաթողիկոսին ուղեկցող հոգեւորականների շարքում յիշատակում է նաև Առաքել Շոռոթեցուն, անշուշտ շեշտելով, որ՝ «էին ամենեքեան աշակերտ նորին»:

«[Յ]Ուով վարդապետաց որ ընդ իւր եկին, Էին ամենքեան աշակերտք նորին, Դաւիթ եւ ի Բարսեղ Օաշ քաղաքացիքն, Եւ Ներսէս կոչեցեալն Տաթեւացին»:

Սոցին ընկեր Առաքել Շոռոթեցին, Գաբրիէլ եւ Յոհան Երեւանեցիքն, Յով[ն]աննէս վարդապետն որ է Մուղնեցի[ն], Տեսուչ Տիգրանակերտ մայրաքաղաքին»:

Ապա Յոհանն կոչեցեալն Առընեցին, Մինաս Երոկկիայ մեծ քաղաքացին, Որ է հովիւ Գաղատացոց նահանգին, Սոքս եւ այլ բազում աշակերտք սոցին»<sup>82</sup>:

Մկրտիչ եպ. Աղաւնունին Երուսաղէմի միաբանների եւ այցելուների ցանկերը կազմելիս, նրանց թուում 1652-ին զետեղելով Առաքել Շոռոթեցու անունը, շարունակում է լրացուցիչ տեղեկութիւններ հաղորդել. «Փիլիպպոս կաթողիկոսի Երուսաղէմ գումարած ժողովին յիշատակը յաւերժացնելու համար, մարմարեայ քարի մը վրայ յիշատակարան մը հաստատուած է Ս. Յա-

82 Բաբգէ Աթոռակից Կաթողիկոս, Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանոց եւ Չիչակաւից, Անթիլիաս-Լիբանան, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1957, էջ 388-392: Հմտ. Հայերէն ձեռագրերի ժէ դարի յիշատակարաններ, հտ. Գ. (1641-1660 թթ.), կազմեց Վ. Յակոբեան, Երեւան, 1984, էջ 522-524:

կորայ վանքին մէջ. բայց յետոյ դժբախտաբար այդ մարմարը մէջտեղէն կոտորուած եւ վնասուած կը մնայ. հոն յիշատակուած են ժողովին մասնակցող տասներկու վարդապետաց անունները, որոնցմէ ոմանք անընթեռնի դարձած են յիշատակարանին վնասուելուն պատճառաւ. սակայն Առաքել վրդ-ի անունը կը կարդացուի: Յիշատակարանին խմբագիրն ալ ինքն է, Առաքել վրդ. գծող սորա Շոռոթեցի»<sup>83</sup>:

Փիլիպպոս կաթողիկոսը Երուսաղէմից ծովով ուղեւորուել է Կ. Պոլիս 1652 թ. Զատիկից յետոյ: Պոլիս է հասել յունիսի կէսերին<sup>84</sup> եւ մնացել մինչեւ 1653 թ. ամռան սկիզբը<sup>85</sup>: Ուղղակի տեղեկութիւններ չունենք՝ Առաքել Շոռոթեցին ուղեկիցներին մէջ էր, թէ ոչ, բայց մատենագրական այլ տեղեկութիւնները վկայում են, որ 1653-ին Առաքելը Պոլսում էր եւ գնել ու վերանորոգել էր մի Աստուածաշունչ, որի վերջում թողել է ինքնագիր յիշատակարան: Այն վկայում է օրուայ անցուդարձին նրա տեղեկացուածութեան մասին: Հաշուի առնելով, որ սա մեզ յայտնի առաջին գրութիւնն է՝ Առաքելի ձեռքով գրուած,

83 Մկրտիչ եպ. Աղաւնունի, Միաբանք եւ այցելուք Հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 27-28:

84 Պոլսում յունիսի 19-ին կաթողիկոսի դիմատորման մասին եւ հետագայ դէպքերի մասին մանրամասն տե՛ս Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, Օրագրութիւն, հրատարակեց Մեսրոպ արքեպս. Նշանեան, Երուսաղէմ, 1939, էջ 29-41:

85 Տե՛ս Մաղաքիա արքեպ. Օրմանեան, Ազգապատում, §1707, էջ 2887: Երեմիան, Բուրսայում ճանապարհորդողների մէջ լինելով, գնում է ճշգրիտ օրը՝ մայիսի 25 (Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, ճշ. աշխ., էջ 41):

Անկասկած վրիպակ է Յ. Անասեանի «Հայ մատենագիտութեան» «Առաքել Շոռոթեցի Բուպիկ» բառայօդուածում «1653 թուականին, երբ Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսը Կ. Պոլիս էր հասել, Առաքել Շոռոթեցին գտնում էր այնտեղ» արտայայտութիւնը (տե՛ս Յակոբ Անասեան, Հայկական մատենագիտութիւն Ե-ԺԸ դդ., հտ. Ա, էջ 1159): Յակոբ Ջուղայեցին կաթողիկոս է դարձել 1655-ին: Խօսքն անկասկած Փիլիպպոսի մասին է:

բերում ենք ամբողջութեամբ. «Արդ վերստին նորոգեցաւ սուրբ գիրքս Առաւկացն Սողոմոնի, եւ այլոց իմաստասիրաց, ի տիրապահ եւ հուշակաւոր քաղաքս որ կոչի Կոստանդնուպօլիս, ի թվաբերութեանս Հայոց ՌՃ. եւ երկրորդի (1653), ի հայրապետութեանս սուրբ Էջմիածնի խստակրան եւ խարազնագրեաց առնն Աստուծոյ՝ Հայոց վերագիրտողի Տեառն Փիլիպպոսի, որ յայսմ ամի պատահել ամա աստ: Քանզի երկու ամալ յառաջ ելեալ ի սուրբ աթոռոյն, շրջագայեաց ընդ Հայաստանեայցս, քարոզելով զբանն կենաց. եւ գնացեալ յԵրուսաղէմ յերկրպագութիւն Տեառն լուսընկալ սուրբ գերեզմանին, եւ ա՛յլ ոտնակոխ տեղեացն Տեառն տնաւրինականաց. որ եղեւ իսկ առաջնորդութեամբ սուրբ Հոգւոյն: Զի մեծաւ հանդիսիւ եւ աշխարհախումբ ժողովով բազում վարդապետօք եւ յորով եպիսկոպոսաւք նա՛ եւ անթիւ քահանայիւք եւ ուխտիւք եկեղեցւոյ կատարեաց զուխտ իւր՝ բազում զուարճութեամբ: Եւ անդուստ եկեալ ի Բիւզանդիա՝ մայր քաղաքաց, ըստ խնդրոյ աստ եղեալ քրիստոնէիցն. զի բազում շահս եւ աւզուտս եղեւ սոցա. մի՛ զի գոյր երկպառակութիւն ի մէջ սոցա. զի ոմանք Անրացի եւ ոմանք՝ դրացի անուանէին. եւ այսմ անուանակոչութեանց բազում վնասս ծնանիւր, քանզի զմիմեանս մատնէին եւ աւերս ուժգինս ածէին ի վերայ իրերաց. եւ սա այնքան միաբանս արար, մինչ զի մի հաւտ եւ մի հովիւ երբն: Եւ երկրորդ՝ զի եկեղեցիքն սուտանուն պատրիարկաց պարտուց ներքոյ էին՝ մինչեւ ցի[20] եւ ի Ռ[1000] զուրիշ. սա զամենայն վճարեաց եւ նզովիւք փակեաց՝ զի ա՛յլ պատրիարդ մի՛ նստցի ասդ: Եւ երրորդ՝ զի զխանգարեալ կարգս հաստատեաց, եւ անկարգութիւնս յոքուեն կարգաւորեաց եւ ուղղեաց: Եւ աստուստ չուարարեալ գնաց յաթոռ իւր: Եւ է սոյն աւուրս, որ էր Նոյեմբեր ամսոյ թ[9]. եւ ի տօնի Յովհաննու Ոսկեբերանի սրբոյ, ի

մէջ գիշերի՝ ի վաղորդեան չորեքշաբթոջ անկաւ եւանդում բոլոր պաղատանին, եւ այրեալ հրդեհեաց թուով ձՌ[100.000] ընդ տուն եւ ընդ խանութ. եւ արար բազում վնասս տաճկաց եւ ոչ քրիստոնէից, եւ թէ ոմանց պատահեալ՝ եւ զայն եւս թերագունից: Արդ ես չիմչիմս ի բանասիրաց եւ յետնաւս վարդապետաց, զառածեալս մեղօք Առաքել անուամբ կոչեցեալ վարդապետ եւ գործով յոյժ հեռի, ծառայից ծառայս Տեառնս ընդ ամա գոլով ի սպասաւորութեանս յամենայն ուրեք, որ եմք երկրաւ Նախիջեւանու, ի Շոռոթ գեղջէ, ստացա[յ] զգիրքս ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց եւ ի վայելումն անձին իմոյ: Վասն որոյ աղաչեմ զամենեանս զհանդիպողսդ՝ որք աւգտիք ընթերցմամբ կամ աւերինակելով, յիշեալիք զպիտակս միով Տէր Ողորմեայիւ. եւ թէ ծանր չթվիցի՝ միով Հայր մեղայիւ, զի թերեւս արժանի գտայց շնորհի Տեառն եւ ողորմութեան՝ աղաւթիւք արժանաւորաց: Եւ ձեզ յիշողացդ լիցի մասն ի Քրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ. որում փառք եւ գոհութիւն ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն անդրաւ յաւիտենիւ. Ամէն»<sup>86</sup>: Նկատելի է, որ 1653 թ. Առաքելը դեռեւս եպիսկոպոսական ձեռնադրութիւն չէր ստացել, թեմական առաջնորդ չէր եւ իրեն կոչում էր «չինչինս ի բանասիրաց եւ յետնեալս վարդապետաց, զառածեալս մեղօք Առաքել անուամբ կոչեցեալ վարդապետ եւ գործով յոյժ հեռի, ծառայից ծառայս Տեառնս ընդ ամա գոլով ի սպասաւորու-

86 Այս ձեռագիրը հետագայում պիտի հանգրուանէր Սբ. Ղազարում (տե՛ս Աստուածաշունչ ԻԳ, Սբ. Ղազարի մատենադարան, ձեռ. թիւ 1195 (ԺԳ դար): Նիկողայոս Երկայնաբազուկ Արդուրեանցի կողմից 1829-ին Հ. Եփրեմ Սէթեանին Տփղիսում նուիրած ձեռագրերից մէկն է (ձեռագրի նկարագրութիւնը եւ յիշատակարանը տե՛ս Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միսիթարեան ի վեճետիկ, հտ. Ա, վեճետիկ-Ս. Ղազար, 1914, էջ 169-174):

թեանս յամենայն ուրեք, որ եմք երկրա Նախիջեւանու, ի Շոտոթ գեղջէ»: Անհաւանական չենք համարում, որ Առաքելը հայրենիք էր վերադարձել կաթողիկոսի հետ 1653 թ. ամռան վերջերին:

Ապրակունեաց վանքում ժէ. դարում ընդօրինակուած ձեռագրերից մէկի յիշատակարանում (1655 թ.), հաղորդում է. «...ի ժամանակս երկաքանչիւրոց ըստ մեղաց մերոց յորացեալ թագաւորութեանց եւ պետական միահեծան իշխանութեանց իսմայելականաց եւ երիմայականաց պարսկականաց Ահմատայ եւ շահ Սէփու անորանուէր արքայից արքայի եւ կարի քրիստոսադաւան տոհմից սիրեցողի եւ պատուողի, յաւուրս նեղութեան եւ անձկութեան հայրապետին ամենայն հայկազարմից տեսնո Յակոբայ Ջուղայեցու, ի յաթոռակալ առաջնորդական եպիսկոպոսութեան Սրբոյ Կարապետի Երնջակայ տեսնո Եսայեա եւ Առաքելի Շոտոթեցույ, ի թվահաշուական համարողութեան ըստ հոլովման ընթացից ամաց անցելոց քսան եւ երկուց յորելինաց եւ երկուց ընդոսնից կատարեալ թուոց [1100 (երկուց յորելինաց՝ 550x2) + 4 (երկուց ընդոսնից կատարեալ թուոց՝ 2x2) + 551 = 1655]»<sup>87</sup>:

87 Տե՛ս Հայերէն ձեռագրերի ժէ դարի յիշատակարաններ, հտ. Գ (1641-1660 թթ.), էջ 492: Յիշեալ յիշատակարանը հրատարակուած հատորում վրիպմամբ տեղադրուած է 1652 թուականի տակ: Յիշատակարանի գրչի լեզուն անէլի լաւ ընկալելու համար բերում ենք մի հատուած. «Շոտոթի տեսնո եւ զօրութեամբ անորին վերստին անորգեալ եղեւ այս կտակարան ողբոց եւ մատեան աստուածարապատ, որ ըստ իւրոյն յարիմողի, կազմողի, կատուողի եւ յարմարողի անուան վերածայնեալ կոչի Նարեկագիրք, որ է սա սեփական վանուցն Փորադաշտայ խրամատակարկատ ցանկապատեցաւ այս այգի տեսնատունն եւ դաշտատր աուցեալ բազմախիտ ծառոք ազգի ազգի ծաղկոք զարդարեալ պատմիշածիք բոլորեցաւ այս բորաստան երփնագունիք եւ զանազան անք ծաղկոք խոնեցեալ եւ փողփողեալ ճառագայթ արձակ փայլողականութեամբ, կրկնաշարիք քարամբք անրակերտեցաւ այս ըշտեմարան ամենունակ եւ անթերական բարութեան:

Յակոբ Ջուղայեցին կաթողիկոս պիտի օծուէր 1655-ին, իսկ «շահ Սէփու անորանուէր արքայից» հատուածը կարող էր գրուել միայն ու միայն Շահ Սեֆի Բ.-ի գահ բարձրանալուց, այն է՝ 1656 թ. նոյեմբերից 1-ից յետոյ:

Մատենագրական յաջորդ միաւորը, ուր յիշատակում է Առաքել Շոտոթեցին, հաւաստիօրէն նրա անունով աւանդուած առայժմ միակ մատենագրական անխորագիր չափածոյ երկն է, որը 1959 թ. մատնանշուել է Յակոբ Անասեանի կողմից<sup>88</sup>, ապա հրատարակուել Յասմիկ Սիմոնեանի

ի խախալեալ քայքայմանց ըստերիւրեալ կազմեցաւ այս դատարան կենդանիացու վիճողաբանութեանց. հորդօրէն հորդեալ յստակագեղացաւ այս հանդիսարան երկանհրաւեր ըմբշամարտաց քաջասրտոյ: Կարկատափերը կցկցաւ այս սոփեստ կենդանի ընդվերանակման միշտ կենդանույն բազմավէճ գրուցատրութեան եւ զանգատափղձ տոչորմանց:

Վերստին մխեցաւ տեսնաբաշխ եւ կենդանախարոկ արեամբ այս աշտէն [ս]այրասուր ընդ սիրտ Աժոբահակալ զազրատեսութեան:

Վերստին յարմարեալ յօրինեցաւ այս պանդարանդան աուցեալ յոքմախիտ անտիք ընդդէմ անսաքարայ գնդին չարապնդութեան:

Վերստին հիւսեալ շինեցաւ այս պարսատիկող, որ կա տիպ քարամբք կրելեօք ի ճակատ կարծեալ գոռոզին ամբարտասանութեան. անորգապէս, յստակապարզ սրբեցաւ այս սուր երկապրի եւ ազդողական եւ արագահաս ի վերայ պարանոցի քինաւոր եւ անհաշտելի ամաղեկացույն պղծութեամբ:

Ի միրհական ճընջմանց թանձրութեանց յարուցեալ եղեւ հաս քաղցրահնչիւն եւ գեղեցկանուագ ի ժամանակս երկաքանչիւրոց ըստ մեղաց մերոց յորացեալ թագաւորութեանց եւ պետական միահեծան իշխանութեանց իսմայելականաց եւ երիմայականաց պարսկականաց Ահմատայ եւ շահ Սէփու անորանուէր արքայից արքայի եւ կարի քրիստոնադարան տոհմից սիրեցողի եւ պատուողի, յաւուրս անեղութեան եւ անձկութեան հայրապետին ամենայն հայկազարմից տեսնո Յակոբայ Ջուղայեցու, ի յաթոռակալ առաջնորդական եպիսկոպոսութեան Սրբոյ Կարապետի Երնջակայ տեսնո Եսայեա եւ Առաքելի Շոտոթեցույ:

88 Տե՛ս Յակոբ Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Ա, էջ 1160:

կողմից<sup>89</sup>: Կենսագրական տեղեկութիւններն ամփոփուած են երկի հետեւեալ հատուածում.

«... Ես ի պանդուխտ անաստ հոգին Առաքել անուն Շոտոթեցին:

Ինձ որոգայթ պատրաստեցին, ի մէջ ծովիմ գիս յափշեցին, Անօրինաց երկիր բերին, Գանձ եւ բազումս տիրեցին:

Դարձեալ յետոյ գերեցուցին, Յարեանս գինն կտրեցին Եւ ի Հայոց մեծ թվականին Հազար հարիւր եւ հինգ ամին:

Ժամանակն այն արքային, Որ էր որդին Իբրահիմին, Սուլթան Մհամատ էր անս անորին, Արքայ էլեալ Կոնստանդինին:

Գրեցայ ի կողմս հիւսիսային Եւ ի մէջոյս գերութիւնին, Ես բազմամեղս չարադիմին, Արժանացայ այս տանջանին»:

89 Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը, աշխատասիրութեամբ Յասմիկ Սիմոնեանի, հտ. Բ, Երեւան, 1987, էջ 306-309: Բնագրի հրատարակիչ Յասմիկ Սիմոնեանը, բնագրի լեզուական ոչ գրագէտ ձեւակերպումներից էլնելով, եւ անհաւանական համարելով Անասեանի ենթադրութիւնը, թէ այս տեքստի հեղինակը վերոյիշեալ Առաքել Շոտոթեցի հայ կրօնաւորն է, շարունակում է. «Ոտանաւորի հեղինակը մօտաւորապէս նոյն ժամանակներում ապրած մէկ այլ Առաքել Շոտոթեցի է, որ եղել է գերութեան մէջ, Ղրիմում ու այդտեղ էլ, 1656 թ. գրչագրել յիշեալ ձեռագիրն ու յօրինել ոտանաւորը: Եթէ դա այդպէս է, ապա բանասիրութեանը յայտնի Առաքել Շոտոթեցու կենսագրութիւնից պիտի հանել այն պնդումը, թէ նա գերի է ընկել, այն էլ, հաւանաբար, իր լատինասիրական հակումների պատճառով: Գրիչ եւ տաղերգու Առաքել Շոտոթեցու մասին կենսագրական ուրիշ տեղեկութիւններ չունենք» (տե՛ս նոյն տեղում, էջ 756):

1656 թ. թուագրած այս տեքստում Առաքելը վկայում է իր գերութեան («Ի մէջ ծովիմ գիս յափշեցին»), այլ երկիր տարուելու եւ թաւանուելու («Անօրինաց երկիր բերին, Գանձ եւ բազումս տիրեցին»), ապա նաեւ կրկնակի գերութեան («Դարձեալ յետոյ գերեցուցին») ու գլխագին սահմանելու մասին (Յարեանս գինն կտրեցին): Դատելով հետագայ հատուածից՝ տարակոյս չի մնում, որ դէպքը պատահել է Օսմանեան կայսրութեան տարածքում («Ժամանակն այն արքային, Որ էր որդին Իբրահիմին, Սուլթան Մհամատ էր անս անորին, Արքայ էլեալ Կոնստանդինին»):

Նոյն ձեռագրի յիշատակարանը՝ գրուած Մարգարէ դպիր Երեւանցու կողմից, աւելի մանրամասնութիւններ է հաղորդում. «... ես անարժան եւ յետեալ ծառայ Մարգարէ դպրիս Յերեւանցի ... ի խնդրուածոյն Շոտոթեցի անարժան Առաքելին, որ բազում փափագանօք գրեցի անջնջելի յիշատակն իւրն եւ ուր ծնողացն եւ ազգայնօքն ամենայն: Էր ինք ի քաղաքիս Տարայլուս՝ եսիրութեանում. գլուխիս բաց եւ տկոր եւ ոտըրանիս բոբիկ, խիստ դառն եւ տխուր, որ հայցեմք անմահ թագօրէն, որ ոչ ինչ քրիստոնայ՝ ոչ տեսնէ եւ այլ հայցեմք անմահ Քրիստոսէն եւ բարեխաւս Աստուածածնէն եւ լուսատու լուսաւորչէն եւ ամենայն սրբոյ յաղօթիցն, որ բարեխօս լինին անմահ թագօրէրին, որ մեզ ազատէ այս այլազգէս, այլ Տէր Աստուած ի սաֆտայ Յաւսման փաշին որ մեզ ազատէ: Եւ թագաւորութիւն էր սուլթան Մհամատին, եւ ի հայրապետութեան Հայոց տեսնո [Յակոբ] սրբազան կաթողիկոսի եւ ի թվականութեանս Հայոց ՌձԵ (1656) կրեցաւ սր. իմաչին պատին, որ ամենայն քրիստոնէից աւզնական լինի սր. ամէն»<sup>91</sup>: Ուրեմն Առաքելը

90 Իմա՛ սուլթան Մհամատ Դ., զահակալել է 1648-1687 թթ.:

91 Տե՛ս Հայերէն ձեռագրերի ժէ դարի յիշատակարաններ, հտ. Գ (1641-1660 թթ.), էջ 702, 772:

քելը գերութեան մէջ է եղել Տարայր-լուսում (Տրիպոլի), այլ ոչ թէ Ղրիմում (ինչպէս նշում է Յակոբ Անասեանը): Մեզ այլևս ոչինչ յայտնի է Առաքել Շոռոթեցու գերութիւնից ազատուելու եւ սեփական թեմ վերադառնալու մասին:

Ստորեւ փորձենք վերոյիշեալ սահմանափակ տուեալներին աւելացնել Վատիկանեան դիւանների տեղեկութիւնները, որոնք շատ աւելի են ընդարձակում մեր գիտելիքները Առաքել Շոռոթեցու եւ դրանով իսկ՝ այդ դարաշրջանի մասին:

Հոռոմ. Յաննաւարական գրութիւններ

1659 թ. ապրիլ ամսին Առաքելին յանկարծ գտնում ենք Հոռոմում Զմիւռնիայից անցնելիս, ուր երկու կրօնաւորներ, իմանալով Հոռոմ մեկնելու մասին, տուել էին իրենց յանձնարարական նամակները: Առաջինը ստորագրել էր «Nicolaus Vahois, Superior Residentiae Smyrnenensis Societatis Jesu» եւ երկրորդը՝ «Fr. Martino Da Thiers Capucinus et custode della missione di Grecia»<sup>92</sup>: Սրանք վկայում են, որ Առաքելը մեծ նեղութիւններով հասել է Զմիւռնիա եւ ուղղուել է Հոռոմ: Նա «Պարսկաստանի մեծագոյն գաւառներից մէկի արքեպիսկոպոսն է, ենթակայութեան տակ ունենալով մի շարք մեծ քաղաքներ, ինչպէս Արդաբիլ (Ardavel), Ֆահրաբատ (Ferrabut), Աչրաֆ (Acceraf), Ղազվին (Casbin), Համադան (Amadan) եւ ուրիշներ»: Վկայականներից առաջինը թուագրուած է 1658 թ. նոյեմբերի 2-ով, իսկ երկրորդը՝ 1658 թ. նոյեմբերի 5-ով<sup>93</sup>:

92 Վերջինիս մասին աւելի մանրամասն տե՛ս Hilaire de Barenton, M. Cap., La France catholique en Orient, d'après des documents inédits, Paris, 1902, p. 130; P. Ignazio da Seggiano O. F.M. Cap., L'Opera dei Cappuccini per l'unione dei cristiani nel vicino oriente durante il secolo XVII, Roma, 1962 (Orientalia christiana analecta 163), pp. 99, 311:

93 Տե՛ս SOCG, vol. 223, f. 19, եւ f. 17:

Հոռոմ մտնելու մասին իտալերէնով վկայութիւն է տուել Նախիջեւանի հայ կաթողիկէ թեմի երկարամեայ գաւառահայր «Պատրի ֆր. Յակոբ Յիսուսին»<sup>94</sup> նշելով, որ Առաքելը Մեծ Հայքի Շոռոթ քաղաքի արքեպիսկոպոսն է, ուր յարգուած է բոլորից՝ «ունեցած մեծ հեղինակութեան եւ վարդապետութեան համար»: Եպիսկոպոսական ձեռնադրութիւնը ստացել է Փիլիպպոս կաթողիկոսից, ինչպէս փաստում է ունեցած վկայականը, վարդապետական աստիճանը ստացել է Ագուլիսի իսախատուր արքեպիսկոպոսից, եւ ինքը՝ Յակոբ Յիսուսին, նրան տեսել է Պարսկաստանի Ֆա[հ]րաբատ քաղաքում<sup>95</sup>, երբ

94 Նախիջեւանի հայ կաթողիկէ թեմի գաւառահայր Յակոբ Յիսուսի (մոտ 1590-1669 թթ.) մասին մանրամասն տե՛ս Carlo Longo, Fr. Giacomo di Gesù OP (1590ca-1669), provinciale d'Armenia, «Archivum fratrum Praedicatorum», LXIX (1999), pp. 225-246. նմմտ. Carlo Longo, Jacques Yisowski, Dictionnaire d'Histoire et de Géographie Ecclésiastiques, vol. 26, Brepolis, 1995, coll. 775-777; Carlo Longo, Silvestro Bendici. Un missionario calabrese del secolo XVII, Roma, Istituto storico Domenicano, 1998, pp. 85, 104, 113-115, 136, 141, 193-195, 197-199, 205-207, 234: Հմմտ. Ասա Է. Սահակ Մեմճեմեան, Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հոռոմը, Վեմետիկ-Ս. Ղազար, 2000, էջ 177-190:

95 Հայ առաքելական եկեղեցու նուիրապետական աթոռների շարքում Ֆերահաբատի թեմի առաջացումն ունի յստակ ժամանակագրութիւն: Այն ձեւաւորում է շահաբասեան մի քանի փուլով իրականացում բռնագաղթի հետեւանքով տեղում յայտնուած հսկայական հայկական համայնքում (տե՛ս Լ. Գ. Գանեղեան, Առաքել Դարիժեցու երկը որպէս Սեֆեան Իրանի XVII դարի պատմութեան...): Անկասկած նորաստեղծ թեմի ձեւաւորմանն է միտում 1620-1650-ականներին հայ կաթողիկոսների եւ նորաստեղծ Նոր Զուռայի քաղաքների բազմակի այցերը Ֆերահաբատ: Ժ.Է. դարի երկրորդ կեսից Ֆերահաբատի հայոց թեմը սկսում է յիշատակուել հայ եկեղեցու նուիրապետական աթոռների յայտնի ցանկերում: Այն առկայ է Ոսկան Երեւանցու անունով յայտնի հայ եկեղեցու նուիրապետական թեմերի ցանկում «Fahrapat, vel Ferah-bat, vel Ferawavu, Archiepiscopatus, vel potius Episcopatus in Provincia Mansanderam» ձեւով (տե՛ս [Simon, Richard (1638-1712)], Histoire critique de la cre-

սուրբ աստիճաններ էր շնորհում կղերիկոսներին<sup>96</sup>:

Հոռոմ հասնելով՝ Առաքելն առաջին ուղերձն է յղում պապին, ուր գրում է. «Մեծ Հայքի Շոռոթի հայ վարդապետ եւ արքեպիսկոպոս Առաքել, եկել եմ Սրբութեանդ մօտ իբր անառակ որդի, խնդրելու արձակում իմ հերետիկոսութիւնների եւ անկարգութիւնների համար եւ յագնելու վատիկանեան սեղանիցը ընկած փշրանքներով: Իմ այս քայլն օրինակ պիտի լինի մի շարք ուրիշ եկեղեցականների եւ աշխարհականների համար՝ անելու նոյն բանը»<sup>97</sup>:

Հաւատաստիւ թարգմանաբար Ալբերիչին 1659 թ. ապրիլի 26-ին փոխարինում է Կղեմէս Գալանոսին, պապի հետ հանդիպմանը Առաքելին ներկայացնելու համար: Կղեմէս Գալանոսը թողել է մի գրաւոր վկայութիւն Առաքելի մասին՝ անուանելով նրան «Աստուծոյ կողմից յայտնուող ուղարկուած արքայութեան հրեշտակ» եւ գրելով, որ ամենաբարի կեանքով եկեղեցական է, կաթողիկէ եւ որ հաւատքի դաւանութիւնն է տուել, փայլուն իմացական

ance et des coutumes des nations du Levant, Publiée par le sr. de Moni, Francfort, chez Frederic Arnaud, M. DC.LXXXIV (1684), p. 222: Լատիներէն բնագրի հայերէն թարգմանութիւնը տե՛ս Պիոն Յակոբեան, Գրական ուսումնասիրութիւններ, Երեւան, 2003, էջ 94-115, ինչպէս նաեւ՝ Ծահէ Վրդ. Անանեան, Ոսկան Երեւանցու կազմած լատիներէն մի տեղեկագրի շուրջ, «Էջմիածին», 2016, Ժ, էջ 13-35: Ժամանակագրութեան աւելի ուշ է Երեւան 21-էպի Բեմիւրեանի գրառումը՝ Հայոց եկեղեցիների ու սրբավայրերի ցանկերում. «Ի Ֆահրաբատ քաղաք խմբ [40.000] տուն ընդ ի վնասակար օդոյն ընջեցան» (տե՛ս Gabriella Uluhogian, Un'antica mappa dell'Armenia. Monasteri e santuari dal I al XVII secolo, Ravenna, 2000, p. 51):

96 Տե՛ս SOCG, vol. 223, f. 15: Նախիջեւանի հայ կաթողիկէ թեմի երկարամեայ գաւառահայր Յակոբ Յիսուսին 1659 թ. սկզբից արդէն Հոռոմում էր (տե՛ս Է. Սահակ Մեմճեմեան, Նախիջեւանի հայոց վարժարանը, էջ 185):

97 Տե՛ս SOCG, vol. 223, f. 14:

նութեամբ, իր լեզուով ուզում է Հոռոմում սովորել աստուածաբանական մի շարք նիւթեր, որոնք իրենց անծանօթ են, նաեւ որ իր երկրում վայելում է մեծ հեղինակութիւն, սիրուած եւ յարգուած է բոլորի կողմից «եւ մեծ համբաւ ունի ամբողջ Հայաստանում»: Նրա կաթողիկոսը՝ Յակոբ Զուռայեցին, ամէն ջանք թափեց, որ Առաքելը չմեկնի արտասահման, քանի որ մեծ էր նրա ազդեցութիւնը միւսների վրայ: Ունի բարեկամական լայն շրջանակ, Լիվոնոյի բոլոր հայ վաճառականներն իրենց համակրանքը Առաքելին ցոյց են տուել նամակներով, որոնք Գալանոսն իր աչքով է տեսել. «Հայաստան գրելիք իր նամակներով կարող է մեծ բարիք անել իրեն բարեկամ զանազան եպիսկոպոսներին»: Գալանոսն իր գրութիւնն աւարտում է՝ ասելով, որ Հոռոմի մէջ էլ հարկ կայ հայածէս ձեռնարկի եպիսկոպոսի, քանի որ մի աշակերտ ձեռնադրուելու համար ստիպուած է եղել Լեհաստան գնալ<sup>98</sup>:

Գալանոսի՝ Առաքելին տուած բնութագրութիւնը մատնում է ներքին մի տրամադրութիւն եւ իրավիճակ: Գալանոսը («Conciliationis ecclesiae Armenae Cum Romana...» աշխատութեան հեղինակը) անցեալում հայ եկեղեցին Հոռոմի աթոռին միացնելու ջանքեր էր գործադրել եւ այդ ժամանակ էլ ջանում էր նոյնն անել:

98 Տե՛ս SOCG, vol. 223, f. 15: Առաքել եպիսկոպոսը Հոռոմում եղած ժամանակ հանդիպում է մի հայ վաճառականի: Վերջինիս մօտ տեսնում է շատ վտանգաւոր (perniciocissima) մի ձեռագիր, որից հայերը սովորում են իրենց սնտի սխալները: 1659 թ. օգոստոսի 18-ի թուակիր փաստաթղթում ասում է նաեւ, որ «այն հայ արքեպիսկոպոսը, որը կաթողիկէ դարձաւ (իմա՛ Առաքելը – Մ. Կ.), նրա միջոցով ստացանք ձեռագիրը», երբ հայ վաճառականը պնդում է վերադարձնել իր ձեռագիրը, դիմում են Հաստատափիտ ժողովին՝ ձեռագիրը Հաստատափիտ թեմում պահելու նպատակով, սակայն՝ վճարելով գումարը, որպէսզի (Առաքել) արքեպիսկոպոսը չներկայացուի իբրեւ խաբէբայ (տե՛ս Fondo Vienna, vol. 22, f. 139):



պուլի արքեպիսկոպոսին օգնական տալու համար, այդ օգնական եպիսկոպոսը արդեօ՞ք պիտի ընդունուի լեհահայերի կողմից, որոնք ենթակայ են Մեծ Հայքի կաթողիկոսին, ով գերագոյնն է: Պատասխանում եմ՝ ո՛չ, որովհետեւ գերապայծառ Առաքելը երկար ժամանակ է՝ վտարուած է (deportio) իր եպիսկոպոսութիւնից, իր իսկ կաթողիկոսից, ով գերագոյն (իշխանութիւնն) է, եւ ուրիշ այլ պատճառների համար, որ հաւատքի մասին է, նաեւ՝ որովհետեւ բոլոր արեւելեան քրիստոնեայ ծէսերը թոյլ չեն տալիս, որ եպիսկոպոսները ձեռնադրուեն ազգի եպիսկոպոսներից, այլ միայն՝ կաթողիկոսից»<sup>106</sup>: Այս վկայութիւնը տուողն այն նոյն Գալանոսն էր, ով երկու անգամ Առաքել եպիսկոպոսին կոչել էր «երկնքից ուղարկուած հրեշտակ»:

Առաքել եպիսկոպոսի առաքելութիւնը Վենետիկում (1661 թ. յունար-մայիս)

1649 թ. Հոռմից Վենետիկ էր անցել Թոմաս վրդ. Բերիացին՝ Կ. Պոլսոյ պատրիարք անուանեալը, ով տիրանալով Ս. Խաչ եկեղեցուն, ծայր էր տուել ահագին խնդիրներին<sup>107</sup>: Վենետիկի հայ վաճառականները դիմում են էջմիածնին: Փիլիպպոս կաթողիկոսի 1652 թ. օգոստոսի 15-ի կոնդակով քաղաք է հասնում Տէր Սահակ Դասապը, ով, չէզոքացնելով Թոմաս վարդապետին, պետութեան վճռով տիրանում է եկեղեցու բանալիներին: Տէր Սահակը երեք տարի պաշտօնավարելուց յետոյ կանչուում է Պոլիս, եւ նրա բացակայութեան ժամանակ Ս. Խաչ եկեղեցու հովիւ է նշանակուում Տէր Վարդանը՝ Առաքել Ծոռոթեցի արքեպիսկոպոսի ազգականը: Տէր Սահակը անահնկալ կերպով կրկին վերադառնում է Վենետիկ, խաբէութեամբ տիրանում եկեղեցու բանալիներին, իսկ Տէր Վարդանը, որ

106 Տե՛ս SOCG, vol. 225, f. 41:

107 Այս մասին առաձիճ կը խօսեճք յատուկ լօղումով:

երեք տարի վարել էր այդ պաշտօնը, 1660 թ. վերջերին դիմում է Հոռմ՝ Առաքել արքեպիսկոպոսին, ով այդ օրերին վայելում էր հայութեան պատկառանքը:

Առաքել եպիսկոպոսը դիմում է Հաւատաստութիւն ժողովին՝ նպատակ ունենալով իր հեղինակութիւնն օգտագործելով միջամտել ի նպաստ Տէր Վարդանի: Վենետիկի առաքելական նուիրակը 1660 թ. սեպտեմբերի 18-ին պատասխանում է Հաւատաստութիւնի սեպտեմբերի 11-ի նամակին, որ առ այժմ ոչ մի լուսաբանութիւն չի կարող տալ երկու հայ քահանաների միջեւ ծագած վէճի մասին<sup>108</sup>, իսկ հոկտեմբերի 9-ի նամակով տեղեկացնում է՝ քանի որ Վենետիկի հայերն անմիջական կերպով քաղաքական իշխանութեան հովանու տակ են, եկեղեցական դասը չի կարողանայ միջնորդել, ուստի խոհեմութիւնը պահանջում է նման պարագաներում գործել մեծ զգուշութեամբ:

Առաքել եպիսկոպոսը միջնորդագրով դիմել էր Վենետիկի նուիրակին խնդրելով Տէր Վարդանին վերահաստատել իր պաշտօնում: Նուիրակը նամակով պատասխանն ուղարկում է Հաւատաստութիւն ժողովին, որպէսզի նամակի բովանդակութեանը ծանօթանալուց յետոյ այն յանձնուի Առաքել արքեպիսկոպոսին<sup>109</sup>:

Այդ օրերին Առաքել արքեպիսկոպոսը խնդրագրով դիմում է նաեւ պապին. «...ազգականներիցս մի քահանայ՝ Վենետիկի Ս. Խաչ եկեղեցու վարդան անունով ժողովրդապետը, հալածանքներ է կրում մի այլ քահանայից, ով Զմիւռնիայի հերետիկոսների իրաւասութեամբ ցանկանում է նրա տեղը գրաւել: Արդ, խնդրում եմ, որ Սրբութիւնդ միջամտի եւ չթողնի նման արարք, այլ գրաւոր հրաման տայ, որ վար-

108 Տե՛ս SOCG, vol. 223, f. 62:

109 Տե՛ս SOCG, vol. 223, f. 64:

դանը մնայ իր աթոռի վրայ»<sup>110</sup>: Առհասարակ նման խնդրագրերը վերահասցեագրուում էին Հաւատաստութիւն ժողովին, որը, 1660 թ. սեպտեմբերի 27-ի նիստին քննելով հարցը, յանձնարարում է Վենետիկի նուիրակին լուսաբանել խնդիրը: Վենետիկի նուիրակը 1660 թ. նոյեմբերի 13-ի նամակով պատասխանում է Հաւատաստութիւնի քարտուղար գերապայծառ Ալբերտիչին, թէ Վենետիկի Ս. Խաչ եկեղեցին՝ Զմիւռնիայի հայ եպիսկոպոսի իրաւասութեան տակ լինելով, նոյն քաղաքից նամակ է հասել՝ 1660 թ. յունուարի 15-ի թուակիր, ուր քաղաքայտօրէն մերժում է Տէր Վարդանը եւ իբրեւ հովիւ հաստատուում է Տէր Սահակը, մինչդեռ նոյն գրութիւնը Տէր Վարդանը մեկնում է ի նպաստ իր անձի: Նուիրակը, չկարողանալով հարցը լուծել, հայերէն նամակի օրինակն ուղարկում է Հաւատաստութիւն ժողովին: Այն դժբախտաբար չգտանք դիւանում<sup>111</sup>:

Քիչ աւելի ուշ՝ 1660 թ. դեկտեմբերի 18-ին, նուիրակը կրկին գրում է Հաւատաստութիւնի քարտուղարին, որ ստացել է դեկտեմբերի 4-ի նամակը եւ սիրով ցանկանում է հետեւել իրեն յղուած թելադրանքին, այն է՝ քանի դեռ թէ՛ Տէր Վարդանը եւ թէ՛ Տէր Սահակը թոշակաւորուած են Զմիւռնիայի արքեպիսկոպոսից, ով ենթադրաբար «հերձուածող» է, լաւ կը լինի, որ Հոռմի եկեղեցին հեռու մնայ այս հարցից, իսկ նուիրակն ինքն իր կողմից որպէս միջանկեալ ճանապարհ առաջարկի, որ Առաքել արքեպիսկոպոսը, որպէս կաթողիկէ, թոշակ սահմանի Տէր Վարդանի համար միայն այդ ժամանակ կարող է իր հովանին տարածել նրա վրայ՝ հեռացնելով Տէր Սահակին<sup>112</sup>:

110 Տե՛ս SOCG, vol. 223, f. 65:

111 Տե՛ս SOCG, vol. 223, f. 74:

112 Տե՛ս SOCG, vol. 223, f. 68:

1660 թ. վերջին օրերին Առաքել արքեպիսկոպոսը մեկնում է Հոռմից եւ 1661 թ. յունուարի 2-ին Լիւռնոսից գրում է Հաւատաստութիւնի քարտուղարին՝ յղելով Ս. Մննդեան մաղթանքներ եւ խնդրելով, որ կատարուի իր ցանկութիւնը, որն իր անունից պիտի ներկայացուի Հաւատաստութիւն ժողովին Կղեմէս Գալանոսի գրչով<sup>113</sup>:

1661 թ. փետրուարի 22-ին Առաքել եպիսկոպոսը խնդրագր է ներկայացնում Վենետիկի դուքսին՝ տալով այդ օրերին պատահած դէպքերի մանրամասնութիւնները. «Պերճափայլ իշխան, 1650-ին քաղաք է հասել յարգելի Տէր Սահակ հայագրին՝ ուղարկուած Փիլիպպոս կաթողիկոսից, մատակարարելու համար խորհուրդները հայոց եկեղեցու մէջ, որ կոչուում է Ս. Խաչ, Ֆերալի (Feralli) կամուրջի մօտ: Նոյն օրերին բաւականին նեղութիւնների է հանդիպել իր նախորդից, յարգելի Թոմաս վարդապետից, որ չէր ցանկանում եկեղեցու մատակարարութիւնը յանձնել Տէր Սահակին: Մի խնդրագրով ժողովուրդը դիմեց ձեր պերճութեանը, որպէսզի հեռացնէք Տէր Սահակը: Խնդրագրերը ձեր կողմից անցաւ Մերակոյտին, 1650 թ. յունուարի 14-ի որոշմամբ, սահմանելով, որ դատարանը քննի երկու կողմերի իրաւունքները: Ձեր պերճափայլ վսեմութիւնը, հարցերը լուսաբանուած նկատելով, Մերակոյտի 1650 թ. օգոստոսի 29-ի վճռով Տէր Սահակին յանձնեց եկեղեցու սպասքները: Տէր Սահակը երեք տարի իր պաշտօնը կատարելուց յետոյ Պոլիս վերադարձաւ իր մեծաւորների կողմ, որոնք նրա տեղը նշանակեցին մէկ ուրիշին: Ութ ամիս առաջ յարգելի Տէր Սահակը, Վենետիկ վերադառնալով, խաբէութեամբ խնդրում է եկեղեցու բանալիները Տէր Վարդան Խաչատուրից (Don Cristofolo Vartan), ով երեք տարի բարութեամբ վա-

113 Տե՛ս SOCG, vol. 223, f. 95: Ակնարկած խնդրագիրը եւս չգտանք Հաւատաստութիւնի դիւանում:

րում էր հովուութեան պաշտօնը: Նա յանձնում է բանալիները՝ զրկուելով թէ՛ եկեղեցու եւ թէ՛ խորհուրդների մատակարարումից: Տէր Վարդանը իսկոյն դիմում է Հռոմ, իր արքեպսկոպոսին, որն ունի վերոյիշեալ Փիլիպպոս կաթողիկոսի ամբողջ հեղինակութիւնը: Արքեպիսկոպոսը, իմանալով այս անկարգութիւնը եւ իմանալով, որ Տէր Սահակը իր անկարգութիւնների համար բանադրուած է Պոլսոյ պատրիարքի կողմից, որոշում է վենետիկ գնալ՝ ենթադրելով, որ Տէր Սահակը, որպէս իր հպատակը, կը յանձնէ եկեղեցու բանալիները՝ իրենց ենթարկուելով, որպէսզի յաջորդաբար թողնի նրանցիցի մէկին ի գոհունակութիւն հայ վաճառականութեան: Սակայն Տէր Սահակը, Մերակոյտի վճռի վրայ վստահացած, չի հնազանդուում իր հովուին:

Արդ, վերոյիշեալ Առաքել արքեպիսկոպոսը, ներկայանալով ձեր վսեմափայլ պերճութեան պատուանդանին, խնդրում է օգնել իրեն պահելու այն հեղինակութիւնը, որ ստացել է իր կաթողիկոսից եւ այնպէս անել, որ այս Սահակը յանձնէ եկեղեցու բանալիները՝ հնազանդուելով իր մեծաւորին»<sup>114</sup>:

Առաքել եպիսկոպոսի այս խնդրագրից զատ, ուրիշ ոչինչ չգիտենք վենետիկում 3-4 ամիս անցկացրած նրա կեանքի մասին: Հաւանաբար վենետիկի դա-

տարանն ու դուքսն իրաւունք են տուել Տէր Սահակին, որովհետեւ Տէր Վարդանը Առաքել եպիսկոպոսի հետ թողել է վենետիկը եւ գնացել Հռոմ:

Հաւատաստիւ ժողովի 1661 թ. մայիսի 9-ի նիստին զեկուցուում է Առաքելի խնդրագրերը, ուր վերջինս յայտնում է, որ «անցեալ յունուարին Ս. Ժողովի ծախսով վենետիկ էր գնացել իր եւ ազգի օգնութեան համար՝ զանազան պարտքեր անելով, ենթադրելով, որ պիտի շարունակուի իր թոշակի վճարումը. այժմ խնդրում է դրամական օգնութիւն»:<sup>115</sup> Ժողովն ընդունում է խնդրագրերը<sup>115</sup>:

Տէր Վարդան եւ Տէր Սահակ

Միտումնաւոր շեղուելով նիւթից՝ տեսնենք Տէր Վարդանի եւ Տէր Սահակի հակամարտութեան վախճանը: Տէր Վարդանը մէջբերուած փաստաթղթերում յիշուում է որպէս «Խաչատուր Վարդան» (*Don Cristofolo Vartan*), իսկ Հռոմին ներկայացուած խնդրագրերում՝ «Vahartan», «Vartan» եւ կամ «Vartan Der Apel»:

1661 թ. մայիս ամսին նրան Առաքել եպիսկոպոսի հետ գտնում ենք Հռոմում, ուր Ս. Աթոռին էր ուղղել խնդրագրեր: Դրանք ներկայացուել են Հաւատաստիւ ժողովի 1661 թ. դեկտեմբերի 5-ի նիստին: Խնդրագրերի բովանդակութիւնը հետեւեալն է.

1. «Տէր Վարդանը, Առաքել եպիսկոպոսի ազգականը, Հռոմ է եկել իբրեւ ուխտաւոր, այժմ պատրաստուում է իր հայրենիք՝ Պարսկաստան վերադառնալու՝ անցնելով Գերմանիայով եւ Լեհաստանով. խնդրում է յանձնարարական նամակ վիեննայի կայսրին»<sup>116</sup>: Նոյն խնդրագրի վրայ Հաւատաստիւ թարտուղարութիւնը տալիս է ծանօթութիւն, որ սա այն

114 Տե՛ս Acta, vol. 30, f. 50, n. 3:  
116 Տե՛ս SOCG, vol. 223, f. 91-92:

անձն է, ում Առաքել եպիսկոպոսն ուզում էր հաստատել իբրեւ վենետիկի Ս. Խաչ եկեղեցու հովիւ՝ հակառակ մէկ այլ հերձուածողի: Սակայն պարզուեց, որ երկուսն էլ հերձուածող են: Լուր տրուեց վենետիկի նուիրակին, որ չխառնուի այս հարցին: Տէր Վարդանը, տեսնելով, որ չյաջողեց, Առաքել եպիսկոպոսի հետ եկաւ Հռոմ եւ այժմ ուզում է վերադառնալ հայրենիք:

2. Երկրորդ խնդրագրով Տէր Վարդանը խնդրում է հայրենիք վերադառնալու համար դրամական օգնութիւն տրամադրել «[կաթողիկէ] հաւատքի տարածման համար աշխատելու նպատակով»<sup>117</sup>:

3. Երրորդ խնդրագրին ուղղուած է պապին. «Հայ Վարդան քահանան ասում է, որ քանզի հայերից շատերը հինգ կամ տասը տարին մէկ անգամ են խոստովանել, քահանաներն իբրեւ ապաշխարանք են սահմանում չմտնել եկեղեցի. այժմ հրաման է խնդրում արձակելու նրանց՝ ներդուլութիւն շնորհելով»<sup>118</sup>:

Այս երեք խնդրագրերը զեկուցուում են Հաւատաստիւ ժողովի 1661 թ. դեկտեմբերի 5-ի նիստին: Արձանագրութիւնները հաղորդում են, որ Տէր Վարդանը Հաւատաստիւ ժողովին տուել է հաւատոյ տաքննութեան ժողովին եւ Առաքել եպիսկոպոսը Վենետիկ գնացած ժամանակ Հաւատաստիւ ժողովից խնդրել է Տէր Վարդանի կաթողիկէ լինելու վկայական, որպէսզի վենետիկի նուիրակի միջոցով նրան հաստատի պաշտօնում<sup>119</sup>:

Տէր Վարդանը Հռոմից մեկնել է Առաքել եպիսկոպոսի հետ, սակայն 1665 թ. նրան դարձեալ տեսնում ենք Հռոմում: Նրա մասին տեղեկութիւններ ունենք իր իսկ խնդրագրերից, որոնցից առաջինում կարդում ենք. «Վարդան Տէր Աբել, կանոն-

117 Տե՛ս SOCG, vol. 223, f. 83:  
118 Տե՛ս SOCG, vol. 222, f. 74:  
119 Տե՛ս Acta, vol. 30, f. 211, n. 7:

նիկոս Երնջակի (*Deringiac*)» Ս. Յովհաննէս եկեղեցու, Զմիւռնիայից բերել է ինը տարեկան հայազգի մի մանուկ՝ Սիմոն որդի Յակոբի, որպէսզի, սովորելով գիտութիւններ եւ քրիստոնէական բարեպաշտութիւն, վերադառնայ եւ հոգեպէս օգտակար լինի իր ազգակիցներին, որոնք կարօտի մէջ են: Խնդրում է, որ տեղաւորուի Հաւատաստիւ ժողովարանում, որովհետեւ յիշեալ մանուկը լաւ յատկութիւններով է օժտուած: Սկսել է սովորել հայերէն քերականութիւն եւ լաւ ծանօթ է իտալերէն լեզուին»<sup>120</sup>: Խնդրագրերը ներկայացուել է Հաւատաստիւ ժողովի 1665 թ. յունուարի 19-ի նիստին, եւ սահմանուել է տալ տասը սկուլը<sup>121</sup>: Սա փաստում է, որ չի ընդունուել Ուրբանեան վարժարան: Բացի այդ, Սիմոնի անունը վարժարանի ցանկերում չկայ:

Երկրորդ խնդրագրում ասուում է. «Հայաստանի Երնջակի (*Derengiac* in Armenia) Ս. Յովհաննէս եկեղեցու կանոնիկոս Վարդան Տէր Աբելը ներկայացնում է հետեւեալը. վենետիկի առաքելական նուիրակը եւ շատ բարեպաշտ ծերակուտականներ պարզել են իրեն այն մեծ օգտակարութիւնը, որ կարող են ձեռքբերել հայ ազգի կաթողիկէ հաւատացեալները, եթէ վենետիկի մէջ հիմնուի վարժարան, ուր հայ պատանիները կը սովորեն կաթողիկէ վարդապետութիւնը եւ այլ գիտութիւններ: Այս նիւթերի մասին շատ յաճախ խօսել են իրեն հետ թէ՛ յիշեալ նուիրակը եւ թէ՛ վենետիկի ծերակուտականները: Բայց որովհետեւ նման բարեպաշտ գործի համար մեծ ծախս է պէտք նախատեսել, որ չի կարելի անել առանց հաւատացեալների օգնութեան, խնդրում է շնորհել յանձնարարական նամակներ, որպէսզի, քաղաքները շրջելով, հանգանակութիւն կազմակերպի հայ վաճառականներից եւ կաթողիկէ հաւատացեալներից ի նպաստ վենետիկի

120 Տե՛ս SOCG, vol. 380, f. 58:  
121 Տե՛ս Acta, vol. 34, f. 1, n. 1:





1662 թ. յունուարի 2-ին տեղեկացնելով Հաւատաստութեան քարտուղարին, որ 9 օր է գտնուում է Լիվոռնոյում, նաեւ Ս. Մննդեան մաղթանքներ յղելով<sup>144</sup>: Մէկ տարի յետոյ յայտնի է դառնում, որ Լիվոռնոյից դուրս գալիս Առաքել արքեպիսկոպոսը վէճ է ունեցել տեղի քահանաներից Տէր Անանիայի հետ, ով ապրում էր Հայ վաճառականների թոշակով... Տեսնելով, որ նա չի տուել կաթողիկէ Հաւատոյ դաւանութիւնը՝ Առաքել եպիսկոպոսը տեղեկացնում է Պիզայի առաքելական նուիրակին: Սա, քննելով Հարցը, 1663 թ. փետրուարի 19-ի նամակով տեղեկացնում է Հաւատաստութեան ժողովին, թէ վէճը ծագել է այն պատճառով, որ Առաքել եպիսկոպոսը ցանկացել է իրեն վերապահել տօնական օրերին պատարագելը, քանի որ հաւաքուելիք ողորմութիւնն առատ էր լինելու, եւ պատճառ է բերել նրա հաւատքի դաւանանք արած չլինելը<sup>145</sup>: Մինչ Պիզայի առաքելական նուիրակը կ'առաջնորդէր Տէր Անանիային տեղի Հաւատաքնութեան ատենան, վերջինս փախչում է Հռոմ, ուր Պողոս արքեպիսկոպոս Փիրոմալլիի ուսուցումից յետոյ միայն Հաւատաքնութեան ատենանը կատարում է կաթողիկէ դաւանանքը, ու կրկին վերադառնում է Լիվոռնո<sup>146</sup>:

Չգիտենք, թէ Առաքել եպիսկոպոսը որքան մնաց Լիվոռնոյում, սակայն Պիզայի նուիրակն իր վերոյիշեալ նամակում վկայում է, որ, բացառութեամբ Տէր Անանիայի Համակիրների, քաղաքի Հայ ազգակիցներն առհասարակ սիրում էին Առաքել եպիսկոպոս Շոռոյեցուն:

Առաքելը 1662 թ. կէսերին դեռ Իտալիայում էր: Այսպէս, 1662 թ. ամռանը՝ յունիսի 10-ին, Վենետիկում Առաքելը դոմին է ներկայացնում խնդրագիր, որի բովանդակութիւնը հետեւեալն էր. Հայոց

144 Տե՛ս SOCG, vol. 223, f. 95;  
145 Տե՛ս SOCG, vol. 223, f. 152;  
146 Տե՛ս SOCG, vol. 223, f. 157:

պատրիարքից յետոյ երկրորդ անձնաւորութիւնը (esser persona la prima dopo il patriarcha d'Armenia), որ ունէր յանձնարարական զրեւր կարգինալ Չիզիից եւ ունկնդրութեան էր արժանացել նորին սրբութեան կողմից (իմա՛ պապի), Պարսկաստան գնալուց առաջ, ունենալով լաւ կապեր պարսից արքունիքի հետ, վենետիկեան իշխանութիւններից խնդրում է յանձնարարական զրեւր՝ ուղղուած պարսից շահին՝ նպատակ ունենալով բանակցել նրա հետ Օսմանեան կայսրութեան դէմ դաշնակցելու համար: Աւելի ամրապնդելու համար իր առաքելութիւնը պարսից իշխանութիւնների մօտ՝ խնդրում է իրեն տալ նաեւ նրանց համար նախատեսուած թանկարժէք նուէրներ եւ ճանապարհածախս<sup>147</sup>: «Մեծ Հայքի Առաքել արքեպիսկոպոսին» («Aranchies Vartapiet arcivescovo d'Armenia maggiore») Վենետիկի սենատի անունից տրւում են նրա

147 Տե՛ս Guglielmo Berchet, *La Repubblica di Venezia e la Persia*, Torino, 1865, Doc. LIII, pp. 230: Վենետիկի հանրապետութիւնը պարսկական իշխանութիւններին հակաօսմանէն դաշնակցութեան առաջարկով դիմել էր նաեւ մօտ երկու տարի առաջ՝ 1661 թ. յունուարի 20-ին (տե՛ս նոյն տեղում, Doc. LI, p. 229): Գ. Բերշէն (փաստաթղթերի հրատարակիչը) Առաքել Շոռոյեցուն դիւանագիտական առաքելութեամբ օժտելը եւ նրա միջոցով նոր առաջարկի ներկայացումը իրաւացիօրէն բացատրում է Կանդիայի 25-ամեայ պաշարման պատճառով Վենետիկի հանրապետութեան շուրջ տեղծուած ծանր կացութեամբ, երբ վերջ ի վերջոյ «խաչը տեղը զիջեց մահիկին» («La repubblica di Venezia dovea anche in questa terza invasione ottomana resistere sola, e sacrificare generosamente il sangue dei suoi figli ed i propri tesori per difendere l'antemurale della civiltà. Dopo una gloriosa lotta di 25 anni, che rese immortale la fama del valore e della costanza dei Veneziani, il regno di Candia fu occupato dalle truppe ottomane, la croce lasciò il posto alla mezza luna» (նոյն տեղում, էջ 53)): Հայ պատմագրութեան մէջ Առաքել Շոռոյեցուն դիւանագիտական առաքելութեան ստանձնումն եւ յարակից պարագաների մասին տե՛ս Աշոտ Յովհաննիսեան, *Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան*, Երեւան, գիրք երկրորդ, 1959, էջ 172-174, 218-219:

խնդրած յանձնարարական նամակներն ու շահի համար նախատեսուած նուէրները: Ճանապարհածախսի համար էլ Առաքելին յատկացւում է 50 zecchini<sup>148</sup>: Առաքել Շոռոյեցուն՝ Հայրենիք վերադառնալու, Պարսկաստանում դիւանագիտական առաքելութեան հետագայ ընթացքի վերաբերեալ տեղեկութիւններ չունենք:

Առաքել արքեպիսկոպոսը իր թեմի մէջ

Առաքել եպիսկոպոսի՝ իր թեմը վերադարձի եւ թեմում գործունէութեան մասին վկայութիւնները շատ քիչ են: Հաւաստիօնեցած յանձնարարական նամակներով ու խնդրագրով Շահի ընդունելութեանն արժանանալու մասին: Սրա վերաբերեալ է ժանանալու մասին: Սրա վերաբերեալ է Շահ Աբաս Բ.-ի 1664/1665 թ. հրովարտուած «Արքայական հրաման հրապարակուեց կը. «Արքայական հրաման հրամանագրով կացրեց, որ աշխարհաստտ հրամանագրով կարգադրուել է որպէսզի վերանորոգման կարիք ունեցող երեք եկեղեցիները մնան օրինակի սաւաղն այն մասին, որ շարի օրէնքով քրիստոնէայ համայնքը իրաւունք ունի ինչ եկեղեցիները, նրանց պատերը եւ թեւաստել գաճով ու տաշած քարով եւ աղիւսով դրանք վերանորոգելու եւ ոչ ոք իրաւունք չունի այդ գործին խոչընդոտելու: Այս առթիւ բարձրագոյն հրամանագիր խնդրեց, որպէսզի ոչ ոք իրեն չարգելի ու չխանգարի: Ուստի կարգադրեցինք որպէսզի ոչ ոք նրան չխոչընդոտի, այլ թոյլ տան ինչպէսզի երեք վանքերը՝ Ագուլիսիւնը, Շոռոյեցուն ու Բիստիւնը, վերոյիշեալ ֆաթվային ու հրամանագրին համապատասխան գաճով, տաշած քարով աղիւսով շարի օրէնքներին համապատասխան վերանորոգել: Այնտեղի շարի եւ

նորֆի հաքիմները պարտաւոր են նրան օրինակական օգնութիւն ցուցաբերել՝ թոյլ չտալով որպէսզի որեւէ մէկը նրան խոչընդոտի ու նա [եւս] շարի օրէնքները խախտի»<sup>149</sup>:

1667 թ. Առաքելը ստիպուած է լինում կրկին դիմել պարսկական բարձրագոյն իշխանութեանը՝ նորոգելու համար այս հրամանագիրը, քանի որ Աբբաս Բ.-ի մահից յետոյ՝ 1666 թ., նոր շահ էր դարձել նրա աւագ որդին՝ Սուլէյմանը: Սուլէյմանի հրովարտուած նորոգութեամբ կրկնում է Առաքելի ստացած՝ եկեղեցիների վերականգնման մասին նախորդ հրովարտակը<sup>150</sup>:

Ունենք նաեւ երկու նամակ՝ գրուած Ապրակունիսից 1665-ին: Առաջինը գրուած է լատիներէն Մայիսի 2-ին եւ ուղղուած է պապին, երկրորդը, որ գրուել է Մայիսի 21-ին, իտալերէն է՝ ուղղուած Հաւատաստութեան քարտուղարին<sup>151</sup>: Երկու նամակն էլ հաւաքաբար շարադրել են Նախիջևանի միաբանողները (ուկիթոր), որոնց հետ լաւ յարաբերութիւնների մէջ էր:

Պապին ուղղուած նամակում Առաքելը հաստատում է իր հպատակութիւնը, ապա յանձնարարականի ձեւով ներկայացնում ունիթորների վիճակը. թեմը չորս տարի է՝ գրկուած է եպիսկոպոսից, ինչը ծանր հետեւանքներ է ունենում թէ՛ վանական եւ թէ՛ երկրի կացութեան վրայ, ուստի ինքն իր կողմից առաջարկում է թեկնածու Հ. Մատթէոս Յովհաննիսեանին (P. Matteo Avanicense), ով խոհեմ է ու

149 Տե՛ս Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը. *Հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731)*, կազմեց Բ. Պ. Կոստիկեանը, Երեւան, 2005, էջ 51-52, վաւերագիր 15: Լիովին իրաւացի է փաստաթղթի հրատարակիչ Քրիստիան Կոստիկեանը՝ յիշեալ Առաքելին Առաքել Շոռոյեցուն (Բոպիկ) ինչպէս նշում է իր յիշատակագրում:  
150 Նոյն տեղում, էջ 51, ծանօթ. 174 (փաստաթուղթը չի հրատարակուած. շնորհակալ ենք Բ. Կոստիկեանին մեր խնդրանքով նախորդի ինչպէս նշում է իր յիշատակագրում համար):  
151 Տե՛ս SOCG, vol. 222, f. 252, f. 246:

148 Տե՛ս Guglielmo Berchet, *La Repubblica di Venezia e la Persia*, Doc. LIV, pp. 231:

փորձառու եւ տարբեր հարցերով ներկայումս Հոռոմ է ուղղուել: Ապա տեղեկացնում է, որ քրիստոնեայ իշխաններից ստացած յանձնարարական նամակների շնորհիւ կարողացել է շահել պարսից թագաւորի համակրանքը եւ իրագործել իր բոլոր նպատակները: Փոխարէնը խոստանում է գործել ի նպաստ հռոմէական եկեղեցու:

Հաւատաստիւնը քարտուղարին գրած նամակով կրկնում է վերոյիշեալը՝ աւելացնելով, որ նամակը գրելու պահին Նախիջեւանում էր՝ Հայ դոմինիկեանների մօտ, որոնք իրեն հոգեւոր ծառայութիւն են մատուցում. «Այս կրօնաւորներին, որ ուրիշներից արհամարհուած են, ես գտայ լաւ վիճակի մէջ»: Դարձեալ կրկնում է ունիթորների համար եպիսկոպոսի կարեւորութիւնը, եւ աւելացնում է. «Յիշում ես, քեզ ասում էի, որ նախ պէտք է հարս ու փեսայի հաւանութիւնը առնել, ապա կատարել պսակի արարողութիւնը: Այստեղ պէտք է դոմինիկեան եպիսկոպոս. իսկ եթէ այլ անձ գրուի, 300 տարի դիմացած Ս. Դոմինիկոսի զգեստը պիտի արատաւորուի: Պէտք է որ տեղիս եպիսկոպոսը յարմար լինի այս ժողովրդին, բնութեանն ու երկրին»<sup>152</sup>:

Հ. Մատթէոս Յովհաննիսեանը ոչ միայն Առաքել եպիսկոպոսի յանձնարարականով, այլեւ ժողովրդի վկայութեամբ ու ստորագրութիւններով մտնում է Հոռոմ, ուր ընտրւում է եւ ձեռնադրւում եպիսկոպոս Պօղոս արքեպիսկոպոս Փիրոմալի փոխարէն:

Շուրջ տասներկու տարի լուսթիւնից յետոյ Առաքել եպիսկոպոսի ձայնը լսելի է դառնում 1676 թ. մարտի 27-ի նամակով, որտեղ Հաւատաստիւնը քարտուղարին հաղորդում է նոյն օրերին պատահած իրագործութիւնների մասին: Նամակը գրուած է Ճահուկում, իտալերէն լեզուով, բայց

152 St'u SOCG, vol. 222, f. 246:

կրում է Առաքել եպիսկոպոսի հայերէն կնիքը:

Առաքել եպիսկոպոսը նախ ներկայացնում է իր անձը՝ յիշեցնելով, որ Աղեքսանդր է. պապի ժամանակ գտնուել է Հոռոմում եւ հաւատոյ դաւանութիւն է կատարել Բարբերինի եւ Օրսինի կարդինալների «ձեռքերի մէջ» ու այնուհետեւ հաւատարիմ է մնացել իր ուխտին: Յայտնում է ջերմ փափագը կրկին Հոռոմ վերադառնալու, ցաւում է, որ թեմի անմիջական գործերը թոյլ չեն տալիս ամբողջական կերպով իրագործելու իր սրտի փափագը, այն է՝ քաղաքի մէջ թողնել իր աճիւնները: Ապա խօսում է դոմինիկեան հայր Պիսկոպոսի իրականացրած առաքելութեան յաջողութեան մասին: Պիսկոպոսն, ուղարկուած լինելով պապի կողմից, պարսից շահից արժանացել է մեծամեծ պատիւների, եւ նրա շնորհիւ միթարուած են ե՛լ կաթողիկէները, ե՛լ հերձուածողները, ե՛լ թուրքերը: Նրա խոհեմ գործելակերպի եւ բարի օրինակի համար շատերն են օրհնել նրան Հայաստան ուղարկողին: Առաքել եպիսկոպոսը խնդրում է, որ Պիսկոպոսն կրկին վերադառնայ իրենց մօտ ի շահ հասարակական բարիքի: Ապա անդրադառնում է Պետրոս Պետիկի անձին, ով լեզուների եւ յատկապէս՝ պարսկերէնի գիտութեամբ զարմացրել էր թէ՛ շահին եւ թէ՛ հայոց գլխաւոր իշխանին: Վերջինս ուզել էր որդեգրել նրան<sup>153</sup>:

Այսքանն էին մեր տեղեկութիւնները 1662-1678 թուականներին Առաքել եպիսկոպոսի գործունէութեան մասին:

Առաջիկա եպիսկոպոսը Վենետիկում եւ Յակոբ Դ. Ջուլայեցի կաթողիկոսը

1678 թ. օգոստոսին անակնկալ կերպով Առաքել եպիսկոպոսին գտնում ենք Վենետիկում: Այս լուրը Հաւատաստիւնը

153 St'u SC Armeni, vol. 3, f. 14:

հաղորդում է Վենետիկի նուիրակն իր 1678 թ. օգոստոսի 6-ի թուակիր նամակով՝ մանրամասնելով, որ նա Պոլսից անցել է Սպալատո (Spalato)<sup>154</sup>, ապա՝ Վենետիկ: Առաքել եպիսկոպոսի այս անգամուայ ճանապարհորդութեան նպատակն էր ընկերակցել Յակոբ Ջուլայեցի կաթողիկոսին՝ Հոռոմի պապին միասին ներկայանալու համար: Վենետիկի նուիրակը, անշուշտ անտեղեակ այս հարցին, անկասկած Առաքել եպիսկոպոսից իմացածն էր հաղորդում Հաւատաստիւն ժողովին՝ գրելով, որ Յակոբ կաթողիկոսը 25 եպիսկոպոսներով ճամբայ է ելել դէպի Հոռոմ՝ «միանալու Հոռոմի եկեղեցուն», եւ որ Առաքելն անցեալում Հոռոմում էր, ուր հաւատքի դաւանութիւն էր տուել, եւ ներկայումս մտածում է այնտեղ սպասել մի քանի ամիս՝ մինչեւ հասնի վերոյիշեալ կաթողիկոսը<sup>155</sup>:

Հաւատաստիւնը 1678 թ. օգոստոսի 22-ի ժողովական նիստին, երբ հաղորդւում է այս լուրը, սկսում են խորհել, թէ ինչ կերպ եւ որտեղ պէտք է ընդունուի ժամանող կաթողիկոսը: Որոշւում է գրել Վենետիկի եւ Լեհաստանի առաքելական նուիրակներին, որ տեղեկացնեն Հաւատաստիւն ժողովին, թէ ինչպէս պէտք է ընդունուի կաթողիկոսը, թէ ինչ վերաբերմունք ունի կաթողիկէ հաւատքի նկատմամբ, եւ քանի հոգի է նրան ընկերակցում<sup>156</sup>:

Վենետիկի նուիրակը Հաւատաստիւն ժողովին յաջորդաբար հասցնում է երկու նամակ՝ 1678 թ. 22 օգոստոս եւ 10 սեպտեմբեր թուականներով: Առաջինով տեղեկացնում է, որ իր նամակի մէջ ներփակ ուղարկում է Առաքել եպիսկոպոսի հայերէն

154 Ներկայումս՝ Սպլիտ, Խորուաթիայում:

155 St'u SOCG, vol. 470, f. 161: Յակոբ կաթողիկոսի՝ Հոռոմ գալու մասին փաստաթղթերը բազմաթիւ են, ուստի մեր գիտից չէնդուելու համար ստորեւ կը քննարկենք միայն այն փաստաթղթերը, որոնք ուղղակիօրէն առնչուում են Առաքել Շոռոթեցուն:

156 St'u Acta, vol. 48, f. 153, n. 5:

նամակը՝ ուղղուած Հաւատաստիւնին: Նաեւ գրում է, որ նոյն եպիսկոպոսից իմացել է, թէ Յակոբ կաթողիկոսը հասել է Լարիսա (Larissa) եւ մի քանի օրից կարող է Վենետիկ հասնել: Երկրորդ նամակում գրում է, որ կաթողիկոսը դեռ Վենետիկ չի հասել, եւ Տէր Յովհաննէս Հոլովը, ով նոյն շրջանում Վենետիկի հայոց միսիոներն էր, ամենեւին չի զարմացել այս աննախադէպ լուրից՝ ասելով, որ կաթողիկոսը վաղուց էր մտածում այս ճանապարհորդութիւնը իրագործելու եւ եկեղեցիները հաղորդակցութեան մասին: Նուիրակը նամակը ավարտում է՝ գրելով. «Ես մտածում եմ Տէր աւարտում է՝ գրելով. «Ես մտածում եմ Տէր Յովհաննէսի (Հոլով) հետ, որ Նախիջեւանի [Առաքել] եպիսկոպոսը մնայ այստեղ մինչեւ պատրիարքի (իմա՛ կաթողիկոսի՝ Մ. Կ.) ժամանումը, միայն մէկ օր առաջ թող Հոռոմ մեկնի»<sup>157</sup>:

Առաքել եպիսկոպոսի՝ Վենետիկում յայտնուելու լուրը հասել էր նաեւ Վիեննայ, որտեղի առաքելական նուիրակը 1678 նա, որտեղի առաքելական նուիրակը Ալ-Հաւատաստիւնը նախագահ կարդինալ Ալ-Թիերիին, տեղեկացնում է, որ Յակոբ կաթողիկոսի մասին հաղորդել է Պետրոս Պետիկին, ով պատասխանել է, թէ առայժմ գիտի կին, ով պատասխանել է, թէ առայժմ գիտի մի հայ եպիսկոպոսի (իմա՛ Առաքելի) Վենետիկ հասնելը, ուր նա սպասում է Պետիկին կամ նրա նամակին՝ ճանապարհէ Պետիկին կամ նրա նամակին համար<sup>158</sup>:

Վենետիկում եղած ժամանակ Առաքել եպիսկոպոսը, իմանալով Մարսելի հայկական տպարանի խնդիրները ու անհամաձայնութիւնները մասին, 1678 թ. դեկտեմբերի 3-ին նամակ է ուղարկում Թոմաս Հայրապետին<sup>159</sup>:

157 St'u SC Armeni, vol. 3, ff. 95, 97:

158 St'u SC Armeni, vol. 3, f. 112:

159 St'u SOCG, vol. 476, f. 72: Այս նամակի եւ յարակից հարցերի մասին մանրամասն տե՛ս Հ. Սահակ Ծմեմեմեան, Հայ տպագրութիւնը եւ Սահակ Ծմեմեմեան, Հայ տպագրութիւնը եւ Շոռոթեցուն (ԺԷ դար), Վենետիկ-Ս. Ղազար, 1989, էջ 2:





Յակոբ Զուղայեցի կաթողիկոսը, ով Առաքել եպիսկոպոսին ուղարկել էր իրենից առաջ իբրև սուրհանդակ, գիտենալով, որ նա կարող է իրեն սպասել՝ 1679 թ. նոյեմբերի 23-ին Պոլսից երկար մի նամակ է գրում Առաքելին՝ իր յապաղման պատճառները նշելով: Կաթողիկոսի նամակը, որ հրապարակուել է այլ աշխատություններում, այստեղ չենք մէջբերում:<sup>165</sup>

Առաքել Շոռոթեցու հանդէպ Տէր Բարսեղի բռնած դիրքը

Տէր Բարսեղ Բարսեղեանը՝ ծայրայեղ լատինամոլ, Հաւատաստութիւն ժողովի ղեկանը լցրել է իր խիստ քննադատութիւններով եւ դատաստաններով: Դեռ Հռոմում չհաստատուած եւ Լիվոնոյ հագիւ ոտք դրած՝ Հաւատաստութիւն ժողովին իր ներքին համոզումները ապացուցելու համար, քննադատում էր «հերետիկոս» հայերին, այդ թւում՝ Առաքել եպիսկոպոսին, ով դեռ Իտալիա էլ չէր հասել: 1668 թ. յուլիսի 13-ին, յիշելով իր առաջնորդական շրջանում ճանաչած Առաքել եպիսկոպոսին, գրում է Հաւատաստութիւն քարտուղարին. «Մեր օրերին Հռոմ եկաւ Առաքել եպիսկոպոս Շոռոթեցին, հաւատքի դաւանութիւն տուեց, պատիւներ ստացաւ, դարձաւ հայերի կողմը եւ կաթողիկոսը նրան կարգեց հայ հերետիկոսների առաջնորդ»:<sup>166</sup>

1676 թ. յունուարի 12-ին նոյն Բարսեղը, խօսքը հասցէագրելով Հաւատաստութիւնի կարգիւններին, թէոգոր Վարդանովիչին, Ոսկան Երեւանցուն, Վարդան եպիսկոպոս Յունանեանին եւ Սսի կաթողիկոս Խաչատուր Գաղատացուն զրպարտելուց յետոյ մեղադրում է արեւելքում գտնուող լատին կրօնաւորներին, որ խաբուում են արեւելքի խորամանկ եկեղեցականներին, որոնք, կաթողիկէ ձեւանալով, նրանցից ստանում են յանձնարարական գրուութիւններ: Այս խորամանկների շարքին է դասում «առաջին եւ երկրորդ Առաքելին»՝ ակնարկելով թէ՛ Նախիջեւանի Առաքել արքեպիսկոպոս Շոռոթեցուն եւ թէ՛ Երեւանի Առաքել եպիսկոպոսին, ով 1668-1670 թթ. Հռոմից անցնելով՝ շրջեց Եւրոպայում «արծաթի համար»:<sup>167</sup>

Առաքել եպիսկոպոսի՝ Վենետիկում եղած շրջանում Տէր Բարսեղը, Հաւատաստութիւն ժողովին տուած անթուական տեղեկագրերից մէկում (որը սակայն տեղաւորում է 1678 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ժամանակամիջոցում), գրում է. «Կարդինալ Ալբերիչին ինձ ազատութիւն է տուել արտայայտելու կարծիքս... Առաքել վարդապետ եւ եպիսկոպոսը, որ այսքան ժամանակ Վենետիկում սպասում է Յակոբ կաթողիկոսին, այժմ պատրաստում է Հռոմ գալու: Յարմար եմ գտնում, որ նրան պէտք եղած պատիւներն ու շնորհները տրուեն, կա՛մ թող Հռոմ գայ եւ կա՛մ իրեն էլ սահմանուի մի գումար, որովհետեւ միւս արեւելցի եպիսկոպոսների նման նա էլ աղքատ է: Երկու տարի եղաւ, որ ծովի ու ցամաքի ճանապարհով ուղղուել է Հռոմ եւ միայն հաղորդակցութեան համար է, որ ամիսներով սպասում է Վենետիկում,

166 Տե՛ս SOCG, vol. 223, f. 261-266:  
167 Տե՛ս SOCG, vol. 458, f. 323-324:

165 Նամակի հայերէն բնագիրը չուներ: Կայ միայն Հաւատաստութիւն ժողովի քարտուղար, կարդինալ Չիպոյի յանձնարարութեամբ Բարսեղ Բարսեղեանի կատարած լատիներէն թարգմանությունը (տե՛ս SC Armeni, vol. 5, ff. 371rv+381rv): Բարսեղ Բարսեղեանի թարգմանութիւնից կատարուած մէկ այլ մաքրագիր օրինակ պահուում է Վատիկանի գաղտնի դիւանում (տե՛ս ASV, Carpegna 55, ff. 399rv-400r): Նամակի հայերէն թարգմանությունը տե՛ս Մեսրոպ վրդ. Թերզեան, *Յակոբ Դ. Զուղայեցի*, Պէրոյթ, 1956, էջ 182-187: Յ. Քիրտեան, *Յակոբ Զուղայեցի*, էջ 43-45: Մեսրոպ Թերզեանի եւ Յ. Քիրտեանի թարգմանութեան մէջ նկատելով անհարազատութիւն բնագրի՝ Յատկութեամբ բերում ենք տեքստի լատիներէն բնագիրը՝ համեմատութեամբ համար:

քարոզելով կաթողիկէ վարդապետութիւնը: Այժմ հակառակութեան է հանդիպում հերետիկոս հայերի կողմից, յատկապէս՝ Տէր Սարգսից, որից այդքան գանգատուել եմ Ս. Աթոռին: Այժմ Տէր Սարգսին ուղղում է Առաքելի հեռանալը Վենետիկից, որպէսզի հասոյթն իրեն մնայ: Առաքելը սպասում է Յակոբ կաթողիկոսի գալուն, որ եթէ հասնելու լինի՝ լաւ է, հակառակ պարագային՝ լաւ կը լինի որ ինքը վերադառնայ իր հայրենիքը, որովհետեւ ճիշտ ու արդար չէ նրան այդպէս թողնելը, քանի որ ամբողջ աշխարհով լուրը տարածուած է, թէ ճամբայ է ելել (եկեղեցիների) միութիւնը իրագործելու: Առ այժմ չի կարող Վենետիկից Հայաստան վերադառնալ՝ վախենալով, որ կաթողիկոսը տարբեր ճանապարհով հասնի Հռոմ: Իրենց պէտք է Հռոմ կանչել, որովհետեւ Վենետիկում չի կարող կեանքն առաջ տանել»:<sup>168</sup>

Լիվոնոյի հայոց միսիոներ Զեբաստիան Քնարը 1679 թ. փետրուարի 6-ի նամակով տեղեկացնում է Հաւատաստութիւնին, որ յունուարի 14-30-ին Առաքելը Լիվոնոյում է եղել՝ տեղի հայերի հետ տօնելու Յայտնութեան ութօրէքի փակումը: Քնարն ազդարարում է Առաքելին, որ համաձայն Ս. Աթոռի վճռի, հայերը պէտք է յարմարուեն լատին տօնացոյցին, եւ որ նա չի կարող պատարագի ժամանակ յիշել կաթողիկոսի անունը: Առաքելն ընդունում է առաջինը եւ մերժում երկրորդը՝ պատճառ բերելով Յակոբ կաթողիկոսի հաւատոյ դաւանութիւն տուած լինելը: Կարապետ վրդ. Անդրիանցին եւս սկսում է յիշել կաթողիկոսի անունը, քանի դեռ Առաքելն այդ քաղաքում էր:<sup>169</sup>

Առաքել եպիսկոպոսը 1679 թ. մարտին Լիվոնոյից ճանապարհուելով՝ հասնում է Հռոմ: Արդէն լուրեր էին հասել (ի-

168 Տե՛ս SOCG, vol. 471, f. 241-242:  
169 Տե՛ս SC Armeni, vol. 3, f. 124-125:

մա՛ Տէր Բարսեղի ականջին), թէ Առաքել եպիսկոպոսն ինչ կերպ էր գործել Լիվոնոյում: Բարսեղը պատրաստում է նոր տեղեկագիր, որտեղ այլեւս չկար նախկին համակրանքը Առաքելի հանդէպ: Տեղեկագրում ասում է, որ Առաքել եպիսկոպոսի՝ Վենետիկում եղած շրջանում (1678 օգոստոս-դեկտեմբեր) Բարսեղը Հաւատաստութիւն ժողովին է ուղարկել լատիններէն երեք տեղեկագիր՝ իրար հակասող շեշտերով, թե՛ րահաւատօրէն արտայայտուելով Յակոբ կաթողիկոսի՝ Հռոմ ուղեւորուելու վերաբերեալ: Երեք տեղեկագիրն էլ անթուական են, սակայն, դատելով բովանդակութիւնից, գրուած են այս շրջանում:

Տեղեկագրերից առաջինում ասում է. «Հայոց Առաքել եպիսկոպոսը նախկինում եկել էր Հռոմ, տուել Հաւատոյ դաւանութիւն եւ վերադարձել Հայաստան Աղեքսանդր է. պապի յանձնարարական գրուութիւններով, որոնց շնորհիւ պարսից շահից ստացել էր վանք եւ Ս. Կարապետի թեմը, եւ այնտեղ պաշտօնավարեց Ս. Աթոռին ցոյց տալու համար, թէ իր մօտ ամէն ինչ լաւ է ընթանում, խնդրեց, որ մէկը գնայ եւ քննէ իր վանքը՝ այնտեղ բնակուելով: Սակայն իրեն պիտի հարցուի, թէ արդեօք ցարդ յարատեւում է նոյն հաւատքի մէջ, հաւատոյ դաւանութիւն պահպանում է ձեռնադրութիւն կատարելուց առաջ, գործածում է կաթողիկէ տօնացոյցը, գինիին ջուր խառնում է, «Որ խաչեցար»-ը երջում է, պապին յիշում է պատարագի ժամանակ (...): Թող պատասխանի, թէ ինչպէս կարող է ապացուցել, որ ինքն ուղարկուել է Յակոբ կաթողիկոսի կողմից, դարկուել է Յակոբ կաթողիկոսի կողմից, եւ եթէ կաթողիկոսը կամենում է Հռոմ գալ, ունի՞ արդեօք նամակ կաթողիկոսից: Ինքը, որ Լիվոնոյում եւ Վենետիկում պատարագել է, հետեւել է սրբազրուութիւններին եւ կամ այդ քաղաքների լատին եպիսկոպոսներից ստացել է պատատին եպիսկոպոսներից ստացել է հրապարակուելու հրաման: Իսկ եթէ անհրաման լրագրուել է, ինչպէ՞ս է յանդգնել Վեպատարագել է, ինչպէ՞ս է յանդգնել Վե-

նետիկում եւ Լիվոնոյում պատարագի մէջ յիշել Յակոբ կաթողիկոսի անունը, մանաւանդ թէ նախ կաթողիկոսի անունը, ապա Պիզայի արքեպիսկոպոսինը: Հրահանգ պիտի տալ իրեն, որ գրի Լիվոնոյի հայերին, որ չյիշեն Յակոբ կաթողիկոսի անունը, մինչեւ Ս. Աթոռը չորոշի, որովհետեւ մինչ հիմա շատ չարիք հետեւեց՝ այդ անունը յիշելով, թէ՛ Իտալիա եւ թէ՛ այլուր: Այս եւ նման հարցումներին պիտի պատասխան տայ, որովհետեւ չափազանց յանգստօրէն է շարժուում»<sup>170</sup>:

Բացի այս տեղեկագրից, որ պահպանուել է մասնական ժողովների հատորում, Բարսեղն ունի նման մէկ այլ տեղեկագիր, որը նիւթ է ծառայել Հաւատաստիւնի 1679 թ. յունուարի 28-ի նիստին<sup>171</sup>, երբ Առաքելը գտնուում էր Լիւոնոյում: Բարսեղն առաջարկում է Առաքելի համար պատրաստել առաջին տեղը Հայոց հիւրանոցում, «մինչեւ տեսնենք, թէ նրանց կաթողիկոսը Հռոմ պիտի հասնի, թէ ոչ. առայժմ այսքանը բաւական է նրա համար, թէ եւ նա կարող է աւելին սպասել»: Ապա առաջարկում է առարկութիւնների մի շարք, որպէսզի Ս. Ժողովը ներկայացնի Առաքել եպիսկոպոսին. «Պէտք է հարցնել նրան, թէ ինչու է Լիվոնոյում պատարագի եւ ժամերգութեան ընթացքում Ս. քահանայապետի անունից յետոյ եւ Պիզայի արքեպիսկոպոսի անունից առաջ բարձրաձայն յիշել Յակոբ սուտ կաթողիկոսի անունը (pseudopatriarcha), եւ ինչու է ստիպել Կարապետ վարդապետին, որ նա էլ նոյն ձեւով յիշի: Առաքելն ասում է, որ այս կերպ է վարուել, որովհետեւ Յակոբը կաթողիկէ դարձաւ, երբ Պիսկոպոսի դիմաց կատարեց կաթողիկէ հաւատոյ դաւանութիւնը՝ նրանից էլ արձակուած ընդունելով. երկրորդ՝ որպէսզի հանդարտեցնի հերետիկոս ժողովրդին, որոնց գլխաւորն էր Գրի-

170 St'u SC Armeni, vol. 3, f. 15-16:  
171 St'u Acta, vol. 49, f. 24, n. 13:

գոր Գերաքը (Ghirac): Առաքելին պէտք է պատասխանել. — Դու չպիտի գործէիր առանց Ս. Ժողովի հրամանի, մանաւանդ երբ տեսար, որ երկու դոմինիկեաններն համաձայն չէին քեզ հետ, մանաւանդ թէ հակառակուեցին քեզ: Եթէ ձեր Յակոբը Արեւելքում ուրիշ կեղծ պատրիարքութիւնների հողում, ձեր իսկ քահանաներից չի յիշուում, ինչո՞ւ էք ուզում, որ Իտալիայում յիշուի եւ դեռ պէտք է քննել, թէ Պիսկոպոսն ունէ՞ր արձակման հեղինակութիւն»<sup>172</sup>: Այս բոլորը գեկուցուել է Հաւատաստիւնի 1679 թ. յունուարի 28-ի նիստին եւ ոչ իսկ նկատի են առնուել: Միայն որոշուել է Առաքել եպիսկոպոսին բնակարան տրամադրել Ս. Մարիամ Եգիպտացի Հայոց հիւրանոցում:

Երբ արծարծուում է Մարսելի տպարանի խնդիրները եւ Հռոմի մտահոգութիւնը, Բարսեղը դարձեալ միջամտում է, կրկին տալով իր ծայրայեղական խորհրդատուութիւնը, մեղադրելով նաեւ Առաքել եպիսկոպոսին, որ Վենետիկ եղած ժամանակ գրել է Մարսել՝ ի նպաստ Սողոմոնի, խոստանալով, որ Հռոմ անցնելուն շարունակելու է իր բարեխօսութիւնը: Բարսեղը, ձեռքին ունենալով Առաքելի բնագիր նամակը, որը ստացել էր Թոմաս Հայրապետից, փոխանցում է այն Ս. Ժողովին ի հաստատումն իր ասածներին<sup>173</sup>:

Սա էր Բարսեղի վերաբերմունքը, ով անխնայ հարուածում էր բոլորին՝ ի ցոյց դնելով իր եռանդն ու նախանձախնդրութիւնը յօգուտ կաթողիկէ եկեղեցու, միշտ թղթին յանձնելով իւրաքանչիւրի մասին լսածն ու իմացածը: Դժբախտաբար Հաւատաստիւն ժողովը, չունենալով համապատասխան մէկ այլ անձնաւորութիւն, ընկել էր Բարսեղի ճիրանները՝ վստահելով նրան:

172 St'u SOCG, vol. 472, f. 128:  
173 St'u SOCG, vol. 476, f. 62-65:

Առաքել եպիսկոպոսը Հռոմում (1679 թ. փետրուար - +1680 թ. օգոստոսի 6)

Լիվոնոյից ճանապարհը շարունակելով՝ Առաքել եպիսկոպոսը 1679 թ. փետրուարին մտնում է Հռոմ, ուր Հաւատաստիւն ժողովի կողմից նրան իջեւան էր յատկացուած Հայոց հիւրանոցում: Առաքելը յուսախաբ էր. իբրեւ Յակոբ կաթողիկոսի պատուիրակ՝ յոյս ունէր Հռոմում աւելի մեծ ընդունելութիւն գտնել: Նրա դժգոհութիւնն արտայայտուած է երկու խնդրագրում՝ մէկն ուղղուած պապին, միւսը՝ Հաւատաստիւն ժողովին:

Հռոմ հասնելուց մէկ ամիս յետոյ Առաքել եպիսկոպոսը Տէր Բարսեղի ուղեկցութեամբ ներկայանում է պապին: Այցելութեան նկարագրութիւնը թողել է Բարսեղը. «(1679) փետրուարի 28-ին ներկայացանք պապին, ով, ինձ հետ եպիսկոպոս տեսնելով, հարցրեց թէ՛ ով է սա: Պատասխանեցի, որ Առաքել եպիսկոպոսն է, եկել է տեղեկացնելու, որ Յակոբ կաթողիկոսը Հռոմ պիտի գայ՝ հնազանդութիւն յայտնելու: Պապը պատասխանեց, որ իմացել է եւ յուսով է, որ [կաթողիկոսը] շարունակի իր ծրագիրը: Շարունակեցի, թէ այժմ կաթողիկոսը գտնուում է Թոխաթում, էրզրումի մէջ արգելքի է հանդիպել, բայց մշտապէս ցանկութիւն ունի Հռոմ գալու: Վենետիկի եւ Լիվոնոյի հայերը սպասում են նրան քառասնորդացի մէջ կամ Զատիկին: 70 տարեկան է: Նրան հնազանդուում է հայերի մեծ մասը, որ բնակուում է Պարսկաստանում, Թուրքիայում, Վրաստանում ու Լեհաստանում»<sup>174</sup>:

Ս. Աթոռին ներկայացրած խնդրագրի բովանդակութիւնը հետեւեալն է. «Մեծ Հայքի Նախիջևանի հայ եպիսկոպոս գերապայծառ Առաքելը՝ ձեր խոնարհ ծառան, գալիս է տեղեկացնելու, որ իր ազգի կաթողիկոսը, ցանկանալով իր ամբողջ ազ-

174 St'u SC Armeni, vol. 3, f. 281:

գի հետ միանալ կաթողիկէ սուրբ եկեղեցուն, արդէն իսկ մեկնել է իր Աթոռից ու իրենից առաջ այլ ճանապարհով ուղարկել է ինձ՝ ձեզ տեղեկացնելու համար: 28 ամիս ճանապարհորդելուց յետոյ, շատ օրեր առաջ Հռոմ հասայ: Ծանապարհին թուրքական հողում վախճանուեց քահանաներից մէկը, ինչի պատճառովով 300 դուկատի վնաս կրեցի՝ ազատուելու համար թուրքերի ձեռքից, որոնք բռնագրաւում են օտարական հանգուցեալի ամբողջ գոյքը: Բացի սրանից, Վենետիկում եղած ժամանակ Տէր Յովհաննէս Յակոբ (Հոյով) միսիոնների խորհրդով ուղարկեցի մի քահանայ՝ կաթողիկոսին տեղեկացնելու, որ Ս. Քահանայապետն ու Ս. Ժողովը ցանկանում են ողջագուրուել քեզ հետ: Իմացայ, որ կաթողիկոսը գտնուում է Թոխաթում, Պոլսի մօտ եւ ուղղուում է Հռոմ:

Առայժմ երեք ծառաներով գտնուում եմ Ս. Մարիամ Եգիպտացույ Հայոց Հիւրանոցում, ուր ինձ տրուած է մի փոքրիկ սենեակ, որտեղ հազիւ կարելի է սեղմուել, եւ բաւական չէ ապրելու համար: Խոնարհաբար խնդրում եմ Ձեր վսեմութեանը, որ միջամտէք, որովհետեւ այս ճանապարհորդութիւնն անելիս եմ թարկուել եմ մեծամեծ ծախսերի ու ներկայումս գտնուում եմ ամենախեղճ վիճակում: Գոնէ գտնեմ այն վերաբերմունքը, որ ունէի Աղեքսանդր է. պապի ժամանակ, ու նշանակէք ինձ նոր բնակավայր, որ տեղաւորուեմ երեք ծառաներով՝ ապրելու համար լաւագոյն պայմաններով»: Ապա, խնդրելով յատուկ կառք՝ շրջելու համար Հռոմի սրբատեղիները, շարունակում է. «Խնդրում եմ հրաման հայկական ծէսով պատարագել կարգաւանջու համար, որովհետեւ Լիվոնոյում եղած շրջանում եպիսկոպոսական հրամանով պատարագի մէջ յիշում էի կաթողիկոսի անունը, մինչ ժողովուրդը վախենում էր յիշելուց: Ուստի խնդրում եմ հրաման տաք Լիվոնոյի հայերին, որ յիշեալ կաթողիկոսը





մակ՝ ուղղուած պարսից շահին, որպէսզի ինքը յաջորդելով պահի թեմի կաթողիկէ բնոյթը<sup>190</sup>: Հաւատաստիւ թ. 1680 թ. սեպտեմբերի 24-ի նիստում որոշուած է ուսումնասիրել հարցը եւ գոհացուցիչ արդիւնքի դէպքում տալ փափագուած նամակները<sup>191</sup>:

1681 թ. յունիսի 16-ի նիստում ներկայացուած է Սիմոնի նոր խնդրագիրը: Նա տեղեկացնում է, որ ժանտախտի պատճառով չի կարողացել ճանապարհորդել՝ Հելլոպոլիս եպիսկոպոսից (իմա՝ Յրանտա Պիքէ) ձեռնադրուելու նպատակով, ուստի խնդրում է, որ իրեն ձեռնադրի Յովսէփ (Յովհաննէս) եպիսկոպոս Շամիրամակերտցի («Թիւթիւնճի») հայ եպիսկոպոսը, ով Հռոմում էր գտնուում<sup>192</sup>: Ժողովը տալիս է դրական պատասխան<sup>193</sup>:

Քահանայական ձեռնադրուելու ստանալուց յետոյ Տէր Սիմոն խնդրանք է ներկայացնում պատարագելու ունիթորներին ձեռով, այսինքն՝ ինչպէս պատարագում են Նախիջևանի կաթողիկէ թեմում<sup>194</sup>: 1681 թ. սեպտեմբերի 30-ի նիստում Հաւատաստիւ մերժում է այս խնդրանքը<sup>195</sup>:

Շուրջ երկու տարի յետոյ Տէր Սիմոնը դարձեալ նոյն հարցով խնդրագիր է ներկայացնում՝ պատճառ բերելով հայ սպասաւորի պակասը եւ Ս. Աթոռի կողմից հայրենիք վերադառնալու արգելքը, քանի

որ մերժուել են շահին եւ կաթողիկոսին ուղղուելիք յանձնարարական գրերը<sup>196</sup>: 1683 թ. յուլիսի 5-ի նիստում Հաւատաստիւ հրաման է տալիս, որ Տէր Սիմոնը պատարագի լատինական պատարագամատոյցով<sup>197</sup>:

Այնուհետեւ կորցնում ենք նաեւ Սիմոնի Հայրապետանի հետքերը: Հաւանական է որ հեռացել է Հռոմից, քանի որ Հռոմի հայոց Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցու տապանադրերում նրա անունը չի յիշատակուում:

\*\*\*

Ստեփանոս Կամենացին (Ռօշթա) իր ժամանակագրութեան մէջ 1682 թուականի տակ ամփոփում է Առաքել արքեպիսկոպոս Շոռոթեցու կեանքը. «Առաքել Վ. եպիսկոպոսն Երնջ[ա]կայ գաւառին, այլ սրբակրօն, անինչ եւ հռչակաւոր քարոզատու, որ բոկ ոտամբ շրջելով Բոբիկ կոչեցաւ եւ վասն անընչութեան, զի զոր ինչ տային նմա պարգեւ, որպէս սովոր են առնել Հայք, աղքատաց բաշխէր, Անարծաթ վարդապետ անուանեցաւ: Սա ի Յակոբայ Կաթողիկոսէն երկիցս առաքեցաւ ի Հռոմ վասն հաստատելոյ զմիաբանութիւն, ուր եւ վճարէ զկեանս իւր. եւ իբր սուրբ թաղի յեկեղեցւոյն Հայոց Սբ. Մարիամու Եգիպտացոյ, որ եւ այժմ պատուի յուխտաւորաց»<sup>198</sup>:

190 ՏԷՍ SOCG, vol. 480, f. 266:  
 191 ՏԷՍ Acta, vol. 50, f. 235, n. 7:  
 192 ՏԷՍ SOCG, vol. 493, f. 28:  
 193 ՏԷՍ Acta, vol. 51, f. 154, n. 12:  
 194 ՏԷՍ SOCG, vol. 498, f. 139:  
 195 ՏԷՍ Acta, vol. 51, f. 282, n. 8:

196 ՏԷՍ SOCG, vol. 487, f. 203:  
 197 ՏԷՍ Acta, vol. 53, f. 130, n. 15:  
 198 Ստեփանոս Ռօշթա, Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, հր. Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1964, էջ 185:

Յաւելուած  
 Յակոբ կաթողիկոսի նամակի լատիներէն թարգմանութիւնը<sup>199</sup>

Nomen Dei  
 Sigillum  
 Jesu Christi servus Jacobus Chatholicus, seu generalis omnium Armenorum. Anno 1104. seu 1655<sup>200</sup>.

Jesu Christi Servus Jacobus Catholicus omnium Armenorum et Patriarcha magnae et Sanctae Sedis Eccimiazini, quae est in civitate Vagarcsabadi, quae sedes est lumine constructa, a Christo delineata, caelo similis, et paradise conformis. A nobis igitur pergat et perveniat littera amoris et salutationis, simul cum divinae dominationis benedictione ad spiritualem et amabilem filium meum Arachel Magistrum, et ad tuos omnes, fiatque tibi gaudere caelesti gaudio. Amen. Gratia te cum, et pax a Deo Patre nostro, et a Domino omnipotente Jesu Christo, et a Spiritu Sancto vivificante, et abundanter donatore, et omnivalente, et hominum amatore, et omnia habente et concess[i]one. Amen.

Cum hac igitur a Deo donata benedictione cognosce o spiritualis et amabilis mi fili, quod quando tu à nobis separatus fuisti, tunc nos ivimus in Giorgiam, et cum illic essemus Can<sup>201</sup> seu Piovet<sup>202</sup> Erevani misit ad nos unum Aga, ut revertemur Erevanum, sed nolimus reverti ad eum progredientes autem pervenimus

199 ՏԵՐԱՍՈՂ ըստ AP, SC Armeni, vol. 5, ff. 371rv+381rv. ՏԵՐԱՍԻ մաքրագիր օրինակը տե՛ս տողատակում (b) ASV, Carpegna 55, ff. 399rv-400r:  
 200 Բ չիք 1655: Millesimo, sexcentesimo quinquagesimoquino.  
 201 Բ Chan  
 202 Բ Prorex



usque ad Bacsaciug<sup>203</sup>, et inde ingressi sumus in<sup>204</sup> Dadian, ut per mare ponticum<sup>205</sup> ad regionem Chersonensem perveniremus, sed talis transitus non fuit nobis possibilis, quia in, Hamcsen<sup>206</sup> quidam Turca potens fuerat rebellis, ad quem<sup>207</sup> debellandum fuerant destinati duo Bacsia, nempe Aslan Bacsia<sup>208</sup> ex una parte, et Bacsia<sup>209</sup> Drabizontis ex altera parte, qui illam regionem ita circumdederant per mare, ut neque vuleres valebant transire, ideo et nos coacti sumus

203 Բ Bagiaciuch  
 204 Բ in de in  
 205 Բ pontium  
 206 Բ Kamsce  
 207 Բ չիք quem  
 208 Բ Asambascia  
 209 Բ Bascia

reverti versus Aclzica<sup>210</sup>, ut per Drabizontem transiremus in Europam, // Tunc audiens Bacse<sup>211</sup> Arzirumi de nobis, misit ad nos militer, qui nos Isberij apprehenderunt, et duxerunt ad civitatem Arzirum, et ibi me in arce tenuerunt, dicentes quod ego voluerim pergere<sup>212</sup> ad franchorum regiones, dixit enim ille Bacse<sup>213</sup>, mancas in arces usque scribam ad magnum Turcam de te, et videbo, quid ipse iubeat, ita faciam. Ego igitur fui retentus per mensam in illa arce, et mediantibus 12<sup>214</sup> sacculis, seu 6000<sup>215</sup> nummorum realium seu pezze<sup>216</sup> d'octo, eductus fui ab arce, et fui de tentus in illa civitate Arzirum per septem alios menses, usque alios tres secculos seu 1500<sup>217</sup> nummos impendi et licentiam ab eodem Bacsa libere abeundi habui inde igitur egressus, ivi Tigranacherdum.

Interea autem Constantinopoli, Armenus ille Cosro, locutus fuerat de me cum Xusein<sup>218</sup> Aga, qui est gener Mahmudi<sup>219</sup> Agai, dicendo scias o Domine Aga, quod noster spiritualis Dominus noster aliam viam vult pergere in Italiam. Tunc statim ille Xusein Aga a magno Turca Emir seu diploma obtinens, et unum ex servis illius commissarium misit ad nos Tigranacherdum, ut nos Constantinopolim conduceret, qui veniens ad nos iterum inspedivit de nostro itinere qui commissarius per septem menses huc et illuc nobis cum conversatus est, non vi sed amo-

210 b *Achelcecha*211 b *Bascia*212 b *ire*213 b *Bascia*214 b *duodecim*215 b *6060*216 b *pezi*217 b *150*218 b *Husain*219 b *Mahamudi*

re, usque conduxit nos Constantinopolim, ad quam ingressi sumus in mense octobris et vidimus illum Husein Aga, et magnum Vezirum, qui receperunt nos cum magno amore, et multam displacentiam ostenderunt de facto Bacsia Arzirumi, promiseruntque, ut quando ille Bacsia ad portam veniet, facturi sint reddere mihi, quae a me abstulerat.

O mi spiritualis fili, quid faciam, ego semper festino, et conor venire Romam, Diabolus autem continuò contrarios et sinistros laquers mihi machinatur. Attamen ego spero in Deum, quod ipsius caput conculcaturus sim, et Romam perventurus.

Item scito o spiritualis fili, in hac hyenie hie Constantinopoli remanebo, in vere autem Smyrnum<sup>220</sup> iturus sum propter debita et ibi quidquid D[omi]no Deo placuerit, ad illud nos dirigat. O amabilis fili tu benè scis, quomodo ante 17. annos ego tot numera, quae praepareveram usque Smyrnum<sup>221</sup> conduxerim, ut versus Romam tunc navigarem. Et quomodo tunc temporis, fuerim impeditus propter Schisma illius Eliazari, et ideo tunc per quinque annos in hac magna urbe remenserim, et per alios duos annos Adrianopoli, et in alijs locis per ambulaverim, usque dum quidquid illi negotio<sup>222</sup> opus erat procuraverim. Propterea illa preparata munera, quae erant valoris 700 Tumanorum, per 11000 scutorum et in hac urbe detulerim et impenderim. Et deinde superato illo schismate reversus fuerim tunc ad nostram Sanctam Sedem, ut unumquemque ex nostris officialibus supra sua officia constituerem, et deinde Romam pergerem cum alijs muneribus competentibus. Sed ut et tibi notum est,

220 b *Smyrnam*221 b *Smyrnam*222 b *negotio illi*

quomodo et tunc iterum fuerim impeditus, per inimicitiam Cani seu Proregis Erevani, ideo ego tunc coactus adierim Regem Persarum et procuraverim deponi ex sua gubernatione illum Can<sup>223</sup>, et alium novum Can<sup>224</sup> in loco illius constitui fecerim. Haec igitur et alia similia nobis accidentia tibi benè nota sunt. Quid dicam, nisi fiat voluntas Domini benedicta, qui iudicat nos esse tribulationi dignos, et ideo permisit, ut nequam ille satanas tot et tot modis nos flagellet, debeo tamen hac omnia cum gaudio supportare, ut misericors ille Deus misereatur nostri, et nostra desideria compleat. O amabilis fili scripseras ad me, ut properarem venire Romam, ad hoc dico, an nunc ne debeam incipere festinare, non ne iam a 20<sup>225</sup> annis ad<sup>226</sup> hoc festino et propero, sed quid faciam cum nequissimus Diabolus, mihi adversatur. Spero tamen in D[ominum] nostrum Jesum Christum, qui dixit, quicumque petit, inveniet mediatricem habendo Sanctam Deigenitricem, et Nationes S[anctorum] Pontificum Silvestri, et Sancti<sup>227</sup> Gregorij ut conculcem caput adversarij illius Satanae<sup>228</sup>. Et veniam ad osculandum principalium apo-

223 b *Chan*224 b *Chan*225 b *Viginti*226 b *iam ad*227 b *ſhp Sancti*228 b *Sathanae*

stolorum Sanctas reliquias, et ad salutandum Ecclesiae haerarcham vivum Sanctum. Ad haec omnia vale per gratiam omnivalentis Dei<sup>229</sup>.

Scripta fuit anno 1128, seu 1679. die 23 novembris, Constantinopoli, apud ecclesiam sanctae Dei genitricis.

Ad manum Arachelis Magistri. Romam aut in cuocumque alio loco sit.

L'originale di questa lettera l'ha rivavuta Mons. Arachie<sup>230</sup>

Haec est interpretatio litterae, quam scripsit Jacobus Armanorum Schismsticorum Catholicus seu generalis, qui dicitur patriarcha Armeniae Maioris, ad Arachel, dictum Archiepiscopum Naccivani<sup>231</sup>.

Quam ego Basilius Barsech interpretatus sum, hac die 4. martij 1680. Romae. Iussu Ill[ustrissim]i et Revmi D[omi]ni Cibo, Secretarij Sacrae Congregationis de Propaganda Fide

229 b *Dei omnivalentis*

230 Վերջին երկու տողը՝ ճիճ իտալերենով («Այս մասակի բնագիրը վերստացել է Գերապայծառ Առաքելը»), հասանաբար գրուած է եղել ծրարի վրայ:

231 b *Nazchivani*